ԵՐԿԻՐ

ՅՈՒՆԻՍ 14-20
2002

#12

«Ամբիոն» օպերացիան շարունակվում է

Ֆոտոլուր

Ընդդիմութեան իշխանափոխութեան երազանքը փուել է իր առաջին արդիւնքը: Երեք օր շարունակ Ազգային ժողովի դահլիճում հնարաւոր եղաւ գրաւել կենտրոնական ամբիոնը եւ թոյլ չտալ Հայաստանի օրէնսդիր մարմնին՝ ներկայացնելու գործադիրի կողմից նախապէս պատրաստուած օրէնքները: Իշխանութիւն ունենալու մեծ երազը առնուազն երեք օրով մասնակի իրականացուած էր:

Խորհրդարանի վերջին եռօրեան օրէնսդրական գործունէութեան հետ այդպէս էլ որեւէ կապ չունեցաւ. «ՀՀ նախագահին պաշտօնանկ անելու հարցի մասին եզրակացութիւն ստանալու համար ՍԴ դիմելու մասին» որոշման նախագծի հեղինակները գրաւեցին Աժ ամբիոնը պահանջելով, որ հարցը ընդգրկուի օրակարգում: Այս պահանջը եւ Աժ ղեկավարութեան հիմնաւորումները թէ իրաւական տեսանկիւնից ընդդիմութեան պահանջը հիմնաւորուած չէ, ծայրաստիճան լարեցին խորհրդարանի մթնոլորտը, եւ, ի վերջոյ, հարցը յանգեց մինչեւ եռօրեան կատարուած այն կանխատեսումներին, թէ ընդդիմութիւնը միայն իմպիչմենտի գործընթացի շուրջ ստեղծուած աղմուկը պահելու խնդիր է հետապնդում եւ ոչ աւելին: Բնականաբար, վերջին եռօրեայի ընթացքում «չլուծուած հարցը» այլեւս մինչեւ աշուն կը քննարկուի հրապարակներում ու հանրահաւաքներում փորձ կատարելով այդպիսով ստեղծել նախընտրական այնպիսի տրամադրութիւններ, որոնք շահեկան են ընդդիմադիրներին: Եւ այս նպատակի իրագործման համար եթէ մինչ այդ գործի էր դրւում հանրահաւաքների միջոցը, ապա արդէն ժամանակն էր խօսելու խորհրդարանի ամբիոնից ելնելով մի պարզ հաշուարկից. հանրահաւաքների մասնակիցների թիւն այլեւս չէր գերազանցում 250 հոգին, իսկ այդ ճանապարհով, բնականաբար, իշխանափոխութիւն չի լինում: Եւ այս զարգացումների համատեքստում արդէն ակնյայտ է դառնում, որ խնդիրը ոչ թէ հարցը իսկապէս օրակարգ մտցնելն էր, այլ մթնոլորտը շիկացնելը: Երեք օր շարունակ ընդդիմադիր պատգամաւորները խոչընդոտեցին խորհրդարանի բնականոն աշխատանքը եւ, արտահերթ ընդմիջումներից մէկի ընթացքում մեծամասնութեան հետ գնալով բանակցութեան, այնուամենայնիւ, փոխհամաձայնութեան չեկան նոյնիսկ այն դէպքում, երբ Ազգային ժողովի նախագահն առաջարկեց 44 ստորագրութիւնով դիմել Սահմանադրական դատարան քննարկելու համար, թէ արդեօ՞ք հարցի ընդգրկումն օրակարգում Սահմանադրութեան շրջանակներում է:

էջ 4

Ականը

Ռազմադաշտում ականը պատահական չի տեղադրւում, թէեւ յաճախ այնպէս է մոռացութեան տրւում, որ պայթում է ոչ միայն թշնամու ոտքերի տակ եւ ոչ միայն պատերազմի օրերին՝ պատրանք ստեղծելով, թէ բուսել է ինքն իրեն՝ սնկի պէս: Պատահել է՝ պայթել է երեխաների խաղի ժամանակ, պատահել է՝ հողը փորելիս, տան հիմքը քանդելիս, ծառ տնկելիս... Եթէ խաղաղ օրերին յատուկ սարքերով ու մասնագէտի միջոցով չի վնասազերծւում ականը, ապա նրա գոյութիւնը, ցաւօք, մատնում է անխուսափելի պայթիւնը միայն:

Քաղաքականութեան մէջ եւ օրէնսդրական դաշտում նոյնպէս ականներ են սարտւում, բայց դրանք կարող են եւ այլ ծագում ունենալ. քաղաքականութեան մէջ ական է գոյացնում անհեռատեսութիւնը, թայֆայական ու կուսակցական շահախնդրութիւնը, աթոռակռիւը, քաղաքական պայքարի քարանձաւային վարքն ու բարքը, օրէնսդրական դաշտում՝ փնթիութիւնը, փոողականութիւնը, անհերեռողականութիւնը, մի խօսքով՝ անկատարութիւնը: Եւ այս գոյացած ականները նոյնպէս պայթում են դիպչելիս, ինչպէս պայթում է, սովորաբար, յատուկ նպատակով սարուածը:

Վերջին պայթիւնը Ազգային ժողովում թէ՛ քաղաքական գոյացում էր եւ թէ՛ օրէնսդրական: Ռեզոնանսային պայթիւն էր. քաղաքականը օրէնսդրականին էր բոց տուել, օրէնսդրականը՝ քաղաքականին: Բացայայտ այս կապը, հնարատր է, ակամայ է յայտնագործուել. հնարամիտների ակամբ ենք դարձել ազգովի...

Ազգային ժողովի կանոնակարգի յոդուած 22-ը կանոնակարգում է ժամանակաւոր յանձնաժողովի գործունէութիւնը եւ բաղկացած է ընդամէնը հինգ կէտից: Եւ ահա թէ ինչ է կանոնակարգում այդ հինգ կէտերից չորրորդը.

«Ժամանակաւոր յանձնաժողովի ներկայացրած եզրակացութեան, տեղեկանքի հիման վրայ պատգամաւորը կարող է ներկայացնել Ազգային ժողովի որոշման նախագիծ, որն առանց քուէարկութեան ընդգրկւում է հերթական նստաշրջանի եւ առաջիկայ եռօրեայ նիստերի օրակարգերում եւ քննարկւում է արտահերթ»:

Ինչպէ՞ս հասկանալ մերկապարանոց այս կէտը. պատգամաւորը, ուրեմն, իրաւունք ունի ներկայացնել որոշման ցանկացած նախագիծ, միայն թէ ժամանակաւոր յանձնաժողովի եզրակացութեան կամ տեղեկանքի հիման վրա՞յ լինի: Իսկ ի՞նչ է այդ «հիման»-ը: Թեմա՞ է, փաստ՞, կա՞մ, ընդհանրացո՞ւմ, մասնաւորեցո՞ւմ... Ի՞նչ է:

էջ 2

Քաղաքական 3

«Պատուիրուած» Հայաստան

Ակտիւ քաղաքականութիւն իր վերադառնալու մասին ՀՀՇ-ի յայտարարութիւնից յետոյ այս քաղաքական ուժը հիմնականում զբաղուած է ազգային արժէքների ու դրանք դաւանողների հանդէպ տարտամ քարոզչութեամբ:

Կառավարում 6

Արհմիութենական «ռենեսանս»

«Նոր արհմիութիւնների առանձնայատկութիւնն այն է, որ նոր օրէնքով հնարաւորութիւն տրուեց մէկ շեշտադրմամբ կարգաւորել գործատու-աշխատաւոր յարաբերութիւնը»,- պարզաբանում է «Ալիք» արհեստակցական կազմակերպութիւնների միութեան նախագահը:

Տնտեսութիւն 7

Աղքատութիւնը անարդար բաշխման արդիւնք է

Չնայած աղքատութեան կրճատման ուղղութեամբ կառավարութեան ցուցչական հաւաստիացումներին, միջազգային փորձագէտները այս հիմնախնդիրը Հայաստանի համար գնահատում են իբրեւ կարեւորագոյն խնդիրներից մէկը:

Ընկերային 8

Տօն՝ դպրարկ ձեռքով

Յունիսի 16-ը մեր երկրում առաջին անգամ կը նշուի իբրեւ «Բուժաշխատողի օր»: Դժուար է ասել, թէ այն կը տօնուի խանդավառութեամբ, քանզի բուժաշխատողների չնչին վաստակն անգամ պետութիւնը զլանում է վճարել:

Իրաւական 9

Ջինդպահազը շարունակում է խոչընդոտել

«Հոկտեմբերի 27-ի» գործով նախկին մեղադրեալների խցերում կատարուած գաղտնալսումները առ այսօր չեն տրամադրուել ՀՀ դատախազութեան քննչական խմբին: Առաւել մեծ գաղտնիութեամբ են պահւում յատկապէս Ն. Բաղալեանի խցում կատարուած ձայնագրութիւններն ու դրանց սղագրութիւնները:

Կրթութիւն 11

Լեզուաբանական «լաթախաղացութիւնը» շարունակւում է

Բուհերի ընդունելութեան քննութիւններին-քիչ ժամանակ է մնացել, ու դատելով այսօրուայ իրավիճակից՝ «Հայոց լեզուի» քննութեանը դարձեալ դաժան ճակատամարտ է սպասւում: Դիմորդների ու լեզուաբանների շրջանում լուրջ մտահոգութիւնների տեղիք է տալիս այն հանգամանքը, որ, չնայած բազմիցս հնչած բողոքներին, բարեփոխուած «Շտեմարանից» էլ չյաջողուեց հանել չարաբաստիկ «զուգածեւութիւնները»:

Այս համարում էջ 5

Թագաւորութիւն աւերակների վրայ

Կառուցուածքային բարեփոխումների շրջանակում վերանուանւում են տարբեր գերատեսչութիւններ, նախարարութիւններ, ստեղծւում են նորերը՝ ազգային յանձնաժողովներ, նախարարութիւններ վերտառութեամբ: «Երկիրը» իր նոր շարքով փորձելու է ներկայացնել Հայաստանի կառավարման համակարգը ներսից, իրական պատկերով՝ դժուարութիւններով եւ թերութիւններով:

ملحق أزتاك

ԽՕՍՔ

Ինքնավարկաբեկման մոլուցք

Հայաստանի խորհրդարանական պատմութիւնը լեցուն է սեփական վարկը գցող, օրէնսդիր մարմնի հեղինակութիւնը արատաւորող երեւոյթներով:

Ու ամէն մի նման դիպուածից յետոյ փորձում ենք ինքնասփոփանքի համար արդարանալ, թէ այլ երկրներում եւս նման դէպքեր են արձանագրուել:

Սակայն մեր երկրի պարագայում այս ամէնը դաս չի լինում, յաջորդ օրն իսկ մոռանում են կատարուածը եւ շարունակում ճամարտակել քաղաքական դաշտի կայացուածութեան, պետութեան հանդէպ հաւատի ամրապնդման, կայունութեան մասին:

Այս մի քանի օրը խորհրդարանում տեղի ունեցող իրադարձութիւնները, յատկապէս ձեռնամարտի ու խայտառակ հայհոյանքի գործադրումը չի տեղաւորուում քաղաքակիրթ քաղաքական պայքարի սահմաններում: Սակայն, վստահաբար, այս ամէնը դաս չի լինելու, քանզի նման երեւոյթներին հիմա էլ վերաբերուում ենք իւրայինի կամ հակառակորդի կողմից արուած լինելու հանգամանքով պայմանաւորուած: Այդ պատճառով էլ ընտրողաբար ենք արարքների մի մասը միայն անօրինականութիւն գնահատում կամ ներկայացնում սեփական էջերում: Իսկ պէտք է լինէր հակառակը, եւ առանց որեւէ խտրութեան իր արժանի քաղաքական ու հասարակական գնահատականը ստանար թէ օրեր շարունակ արդէն ծիծաղելի դարձած ամբիոնի պաշարումը, թէ գործարար պատգամաւորի կողմից անթոյլատրելի պահուածքը, կամ երկրապահ պատգամաւորի փողոցային հայհոյանքների հեղեղը Ազ դահլիճում:

Այս դրութիւնը դատապարտողներից շատերը, վստահաբար, մի քանի օր յետոյ ապագայ Ազ ճակատագրի քննարկման ընթացքում կրկին պաշտպանելու են մեծամասնական տեղերի աւելացման նախագծերը՝ հիմնաւորելով դա հազար ու մի պատճառաբանութիւններով, ու զանց են առնելու անցած եռօրեայում կատարուած խայտառակութիւնները, քանզի նրանց միշտ ձեռնտու է ունենալ լոկ անձնական, տնտեսական շարժառիթներով դիրքորոշումներ ճշտող պատգամաւորներ:

Որոշ պատգամաւորներ առանց գիտակցելու, ոմանք էլ՝ գիտակցաբար շարունակում են խորհրդարանի արատաւորման ու հեղինակազրկման գործընթացը եւ սպառնում են այն նուազագոյն վստահութեանը, որ դեռ ունէր Հայաստանի քաղաքացին իր Ազգային Ժողովի հանդէպ: Իսկ վստահութեան նման կորուստը չի լինելու միայն այս Ազ հանդէպ, այլ տարածուելու է յետագայում ընտրուող օրէնսդիր մարմինների վրայ եւս:

Վերանալու են ընտրութիւնների նկատմամբ մնացած՝ արդէն իսկ կիսատ-պռատ հաւատի վերջին յոյսերը, եւ հրապարակում մնալու են լոկ ընտրակաշառքով, լծակներով ու հեղինակութիւններով ընտրուող պատգամաւորութեան գաղափարազուրկ թեկնածուները: Իսկ այդ ժամանակ արդէն ուշ է լինելու խօսել քաղաքական համակարգի ու պայքարի մասին: Գործի են դրուելու բռունցքները, փողը, զէնքը, որից վախեցած՝ արդէն հիմա արգելում են պատգամաւորների զինուած մուտքը Ազգային Ժողով:

Ռուբէն ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ականը

էջ 1

Կարելի է, ասենք, բնապահպանութեան հարցերով ստեղծուած ժամանակատոր յանձնաժողովի եզրակացութեան կամ տեղեկանքի հիման վրայ որոշման նախագիծ մտցնել օրակարգ եւ արտահերթ քննարկել՝ պահանջելով բնութիւնից աւելացնել մեր բազմաչարչար ու չորային երկրի վրայ թափուող տեղումների քանակը: Եւ կամ մեր ընդերքը լցնել նաւթով: Կարելի է, չէ՞, այս կերպ ընկալել սոյն կէտը եւ գրկել Ազգային ժողովի կենտրոնական ամբիոնը, եթէ առաջարկը օրակարգ չմտնի: Ես շատ էլ չեմ չափազանցնում, քանզի մեր Ազգային ժողովում եղել են նման փորձեր... Քիչ էր մնում՝ մի օր երաշտի մասին օրէնք ընդունուէր... Եթէ ընդունուէր, համոզուած եմ՝ հերթականը քամու մասին օրէնքն էր լինելու...

Առանց վերապահումների, առանց սահմանափակումների, առանց խնդիրների շրջանակը ճշգրտելու, առանց այլ յոդուածների ու կէտերի հետ համակեցութեան օրէնքը յարգելու, այսպիսի կէտը ական չէ՝ ի՞նչ է: Եթէ ական չէ, ինչո՞ւ պայթեց: Եւ, վերջապէս, ժամանակատոր յանձնաժողովի եզրակացութեան կամ տեղեկանքի հիման վրայ որեւէ պատգամատրի որոշման նախագիծը իր կարեւորութեամբ ինչո՞ւ է հաւասարեցուել պատգամատրների առնուազն մէկ երրորդի նախաձեռնութեամբ Ազգային ժողովի որոշման նախագծին (յոդուած 52, կէտ 6):

Տեսէք, թէ ինչ նրբանկատութիւն է ցուցաբերուել յաջորդ՝ 5-րդ կէտում, որը վերաբերում է յանձնաժողովի մասնագէտներին (փորձագէտներին), «նրանց կազմը եւ թուաքանակը հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ համապատասխան յանձնաժողովի ներկայացմամբ, եթէ Ազգային ժողովի որոշմամբ այլ բան նախատեսուած չէ»: Հապա ո՞ւր մնաց այս նրբանկատութիւնը նախորդ կէտի համար: Ինչի՞ արդիւնք է այս երկկենցաղութիւնը:

3-րդ կէտում ասուած է. «Իր գործունէութեան արդիւնքների մասին ժամանակատոր յանձնաժողովը սահմանուած ժամկէտում զեկուցում է Ազգային ժողովի նիստում»: Զեկուցեց: Յետո՞յ: Զեկոյցը ընդունուում է ի գիտութիւն, գնահատո՞ւմ է: Ոչ մի խօսք այս մասին: Ազգային ժողովը, բանից պարզւում է, իր իսկ ստեղծած ժամանակատոր յանձնաժողովի եզրակացութիւնը, տեղեկանքը գնահատելու խնդիր չունի: Իսկ եթէ սխա՞լ եզրակացութեան է յանգել եւ կամ վա՞տ է աշխատել: Ի՞նչ ենք անելու: Կարելի է եւ չգնահատել աշխատանքը, բայց այդ դէպքում ներկայացրած եզրակացութեան հիման վրայ ինչպէ՞ս ենք արտօնում պատգամատրին՝ որոշման նախագիծ ներկայացնել: Սա ական չէ՞:

Ես չեմ պնդում, թէ «Հոկտեմբերի 27-ի գործով» ստեղծուած ժամանակատոր յանձնաժողովը լաւ չի աշխատել: Նման բարդութիւն ներկայացնող գործը նկատի ունենալով, պայմաններն ու հանգամանքները հաշուի առնելով՝ յանձնաժողովը, թերեւս, աւելին չէր էլ կարող անել, սակայն ակնյայտ է, որ կասկածներով գերյագեցած մթնոլորտը, որ տիրական է դարձել մեր երկրում, իր ազդեցութիւնն է թողել եզրակացութեան վրայ: Յանձնաժողովը, կամայ թէ ակամայ, խախտել է իրաւասութիւնների իր սահմանը՝ հնարատրոպիւն ընձեռելով շահագրգիռ պատգամատրներին՝ «հիման վրայ» որոշման արտառոց նախագիծ ներկայացնել: «Արտառոցը», առհասարակ, նախագահի պաշտօնանկութեան գործընթացին չի վերաբերում, սահմանադրական նորմին չի վերաբերում, այլ այն նախագծին, որն առնուազն մի քայլով հրում է մեզ դէպի ականը: Այս դէպքում՝ բարեբախտաբար, երեւացող, նկատելի, դիւրին վնասազերծուող ականը: Սակայն նոյնիսկ երեւացող, նկատելի, դիւրին վնասազերծուող ականը կարող է պայթել, եթէ զաւեշտի եւ վերածում ամէն ինչ կամ հակադարձում ես սեւ կիրքը եւ կամ անհասկանալի անտարբերութեամբ սպասում կրքերի մարմանը. իբր, ոչինչ չի պատահել՝ թոյլ չե՞ն տալիս ելոյթ ունենալ կենտրոնական ամբիոնից, կը խօսենք համարակալուած խօսափողերից: Կարելի է լուռ ու մունջ քուէարկել, ընդունել օրէնքներ՝ միայն թէ բնականոն աշխատանքի ամբիոնը գրկած պատգամատրների նկատմամբ յաղթանակի պատրանք ստեղծուի: Պատրանք ստեղծելով, կարգը խախտելով յաղթանակը աւելի քան պարտութիւն է, որովհետեւ կարգազանցը հարկադրում է քեզ խաղի իր կանոնները, ստիպում խրուել ճահիճը, որտեղից եթէ դուրս էլ գաս, ապա ոտքից գլուխ՝ ցեխոտ:

Սա ականազերծում չէ, այլ նոր ականի տեղադրում: Իսկ երկրին, իրօք, ականազերծում է անհրաժեշտ: Եւ՝ ոչ միայն քաղաքական ու օրէնսդրական դաշտում:

Ազգային ժողովի նիստում հարցերի քննարկման կարգը գլխում (7), յոդուած 55-ի 10-րդ կէտում ասուած է. «Եզրափակիչ ելոյթներից յետոյ արտահերթ ելոյթի իրաւունքը պահպանում է միայն հանրապետութեան նախագահը»: Նոյնիսկ ամենահասարակ թուացող հարցը քննարկելիս հանրապետութեան նախագահին տրուած այս իրաւունքը, արտօնութիւնը, կարծում եմ՝ բացատրութեան կարիք չունի: Այդպէս էլ պիտի լինէր, եթէ նախագահական համակարգով ենք ապրում եւ ունենք հանրապետութեան նախագահ:

Ազգային ժողովի նիստերի դահլիճում, նախագահութեան սեղանից քիչ աջ յատուկ սեղան է յատկացուած հանրապետութեան նախագահի համար: Մնձամբ ես այդ սեղանի մօտ երբեք չեմ տեսել հանրապետութեան նախագահին: Իսկ ականազերծման աշխատանքը երկրում ուրիշ ո՞վ պիտի ղեկավարի, եթէ ոչ այդ սեղանի տէրը: Որքա՞ն կարելի է սպասել ինքնավնասազերծման սին հրաշքին: Մեղք է այս երկիրը:

ՀՅԴ Յունասպանի Կենտրոնական կոմիտէի հրաւէրով Աթէնքում է ՀՅԴ Հայասպանի Գերագոյն մարմնի անդամ, արտաքին քաղաքական յարաբերութիւնների պատասխանատու ԷԴՈՒԱՐԴ ՂԱԶԱՐԵԱՆԸ:

ՀՅԴ ներկայացուցչի այցը Յունաստան

Էդուարդ Ղազարեանը ՀՅԴ Հունաստանի ԿԿ-ի եւ Հայ Դատի յանձնախմբի անդամների ընկերակցութեամբ հանդիպումներ է ունեցել յունական կուսակցութիւնների ներկայացուցիչների, այդ թվում ՊԱՍՕԿ-ից պատգամաւոր եւ միջազգային հարաբերութիւնների պատասխանատու պրն Պարասկեւաս Աւղերինոսի, «Նոր հանրապետութիւն» կուսակցութեան միջազգային յարաբերութիւնների եւ Եւրամիութեան գրասենեակի պատասխանատու պրն Սպիրոս էֆսթաթոպուլոսի, «Սինասպիզմո» կուսակցութեան քաղաքական գրասենեակի պատասխանատու Փանոս Թրիղազիսի հետ:

Հանդիպումների ընթացքում Էդուարդ Ղազարեանը ներկայացրել է Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, ՀՅԴ մոտեցումները տարածաշրջանային զարգացումների վերաբերեալ:

Քննարկվել է նաեւ միջկուսակցական յարաբերութիւնների ընդլայնման հեռանկարների հարցը:

«Պատուիրուած» Հայաստան

Ակտիւ քաղաքականութիւն վերադառնալու իր մտադրութեան մասին ՀՀՇ-ի յայտարարութիւններից յետոյ ենթադրւում էր, որ այս քաղաքական ուժը հանդէս կը գայ առաջին հերթին՝ երկրի բազում հիմնախնդիրների լուծման սեփական ծրագրերով: Փոխարէնը՝ ակնհայտ ենք ազգային արժէքների ու դրանք դաւանող քաղաքական ուժերի հանդէպ պարտական քարոզարշաւի:

Արտակ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերջին դրսեւորումներից մէկը «Դաշնակցութիւն կամ ՀՀՇ» վերնագրով հրապարակումն է, որի իմաստը յանգում է հետեւեալին. Հայաստանում այսօր կան իշխանութեան յաւակնող երկու քաղաքական գաղափարախօսութիւններ՝ ՀՀՇ-ի եւ Դաշնակցութեան գաղափարախօսութիւնները: Եթէ յիշում էք, ժամանակին ՀՀՇ-ի համար ազգային գաղափարախօսութիւնը կեղծ կատեգորիա էր, իսկ ազգային արժէքներ դաւանողները՝ լուսանցքայիններ: Այսօր ՀՀՇ-ի քարոզչութիւնը որդեգրել է առաւել «նուրբ» մարտավարութիւն. նրանց համար ազգային գաղափարախօսութիւնը «անպետութիւն, անհայրենիք ժամանակների ծնունդ աւանդական կոչուածն» է:

Իմաստ չունի վերլուծել ՀՀՇ-ի ու ՀՅԴ-ի գաղափարախօսական հիմնադրոյթների էութիւնն ու բովանդակութիւնը, առաւել եւս անիմաստ է եւս մէկ անգամ թուարկել ՀՀՇ-ի գաղափարախօսութիւնից բխած այն ծրագրերի ու քաղաքականութեան «բարիքները», որոնց ականատեսն ենք եղել տարիներ շարունակ, եւ որոնց հետեւանքների վերացումը դեռ շատ ջանք ու ժամանակ է պահանջելու: Առաւել նպատակայարմար է դիտարկել ՀՀՇ-ի գաղափարախօսութիւնից բխող Հայաստանի այն պատկերացումը, որ նկարագրւում է ոչ միայն խնդրոյ առարկայ յօդուածում, այլեւ ՀՀՇ-ի առաջնորդների՝ վերջին շրջանի հրապարակային ելոյթներում:

Համաձայն ՀՀՇ-ի «քարմացուած» գաղափարախօսութեան, Հայաստանը զարգանալու մէկ ճանապարհ ունի. հնարաւորինս արագ անդամագրուել ՆԱՏՕ-ին, բացել Թուրքիայի հետ սահմանը, իսկ դրա համար՝ նախ եւ առաջ հարկաւոր է հրաժարուել Ցեղասպանութեան ճանաչմանն ուղղուած ջանքերից, արգելել ազգային արժէքների քարոզչութիւնը, Հայաստանը «մաքրել» ջաւախքահայերից ու դարաբաղցիներից (ինչպէս իրենք են ասում՝ «Ասկերանի բանդայից») եւ այլն: Այսինքն՝ ՀՀՇ-ի համար ջաւախքցիներն ու դարաբաղցիները հայեր չեն: Իսկ այդ ծրագրերն իրագործելու համար ՀՀՇ-ն խորհուրդ է տալիս սպասել «արտաքին ազդակներին», այսինքն՝ ճշտել, թէ որ գերպետութիւնը որ պահին ինչ շահ ու նպատակ կ՝ունենայ այս տարածաշրջանում, որպէսզի տեղաւորուեն «արտաքին ազդակից» բխող արտաքին պատուէրի տակ:

Ահա սա է հիշական (ինչպէս իրենք են կոչում՝ «հայաստանակենտրոն, որը ազգային շահ ասելով՝ հասկանում է նախեւառաջ Հայաստանի պետական շահը») գաղափարախօսութիւնը: Թէ վերոյիշեալն ինչ չափով է առնչւում ազգային ու պետական շահին՝ դժուար չէ տեսնել: Դժուար չէ հասկանալ նաեւ այն մղումը, որով քաղաքական կեանքում ակտիւանալ ցանկացող ՀՀՇ-ն առաւելապէս զբաղուած է Դաշնակցութեան եւ ազգային արժէքներ դաւանող ցանկացած ուժի եւ անձի համապարփակ քարկոծմամբ: Չէ՞ որ նրանք լաւ են հասկանում. քանի կան ազգային գաղափարախօսութեան կրողներ, ՀՀՇ-ի գաղափարախօսութիւնը չի գործելու (չի լինելու «ներքին ազդակ»): Իսկ դա իր հերթին նշանակում է, որ բացառուելու է իշխանութեան վերադառնալու ՀՀՇ-ի ձգտումը: Ուստի նրանք յոյսները դրել են «արտաքին ազդակի» վրայ, դրա համար է արտաքին ուժերի հաւանական պատուէրը ՀՀՇ-ն ներկայացնում է որպէս Հայաստանի պետական շահ: Եւ սա է հիշականների պատկերացրած Հայաստանը:

Դժուար չէ հասկանալ այն մղումը, որով քաղաքական կեանքում ակտիւանալ ցանկացող ՀՀՇ-ն առաւելապէս զբաղուած է Դաշնակցութեան եւ ազգային արժէքներ դաւանող ցանկացած ուժի եւ անձի համապարփակ քարկոծմամբ: Չէ՞ որ նրանք լաւ են հասկանում. քանի կան ազգային գաղափարախօսութեան կրողներ, ՀՀՇ-ի գաղափարախօսութիւնը չի գործելու:



ՏԵՍԱԿԷՏ

Մեղաւորը նաեւ մենք ենք

Վերջին օրերին Ազգային ժողովում ծաւալուած իրադարձութիւնները լաւագոյնս ցուցադրեցին հայրենի քաղաքական կեանքի արատները: Շատերի կարծիքով՝ տեղի ունեցածը հանրապետութեան քաղաքական համակարգի չկայացածութեան հետեւանք է: Ոմանք հակուած են պատճառը փնտրել մի խումբ պատգամաւորների՝ երկրում ամէն գնով ապակայունացում մտցնելու նպատակադրման մէջ: Կան նաեւ կարծիքներ, թէ տեղի ունեցած խայտառակութիւնը հետեւանք է ընդհանրապէս ներկայ խորհրդարանի՝ երկրի բարձրագոյն օրէնսդիր մարմնի կարգավիճակից բխող մակարդակին անհամապատասխանութեան:

Անշուշտ, նշուած պատճառաբանութիւններն ընդհանուր առմամբ արդարացի են: Սակայն առկայ է մէկ այլ, կարծում ենք, ոչ պակաս հիմնաւոր եւ էական հանգամանք, որը բուն պատճառն է տեղի ունեցածի, եւ որը պարբերաբար ծնելու է նմանօրինակ խայտառակութիւններ: Խօսքն այն մասին է, թէ վերջին 3-4 տարիներին ովքեր, ինչ ճանապարհներով եւ ամենակարեւորը՝ ինչ նպատակադրումներով մտան խորհրդարան եւ այսօր յաւակնում են որոշելու երկրի ու ժողովրդի ճակատագիրը: Ովքե՞ր են խորհրդարանական այս անցուդարձի «գործող անձինք»: Մարդիկ, ովքեր տարիներ շարունակ քաղաքականութեամբ չեն զբաղուել, չեն մասնակցել ազատամարտին, չեն խառնուել երկրի համար կենսական նշանակութիւն ունեցող որեւէ խնդրի քննարկման, որեւէ ծրագիր ու գաղափար չեն առաջարկել, որեւէ սկզբունք, ծրագիր ու գաղափար երբեւէ չեն ունեցել: Բնականաբար, չեն տուժել նաեւ որեւէ սկզբունք ու գաղափար դաւանելու համար: Ամենակարեւորը՝ չեն ունեցել քաղաքական կենսագրութիւն: Փոխարէնն ունեցել են իւղոտ բիզնես ու շատ փող, անհրաժեշտ պահին ուժեղի կողմն անցնելու «հոտառութիւն», ըստ քաղաքական կոնիւնկտուրայի՝ կուսակցական պատկանելութիւնը փոխելու ընդունակութիւն, լուրջ հարցերը «ապէրոյական» բառապաշարով ու ոճով առաջ տանելու հակում:

Եւ այս մարդիկ այսօր հայոց խորհրդարանի պատգամաւոր են, որոշում են երկրի ու ժողովրդի ապագան: Արժէ՞ զարմանալ, որ այս անձինք պարբերաբար (անկախ խնդրի բովանդակութիւնից) պէտք է նմանօրինակ խայտառակութիւններ ցուցադրեն Աժ դահլիճում: Արժէ՞ զարմանալ, որ այս անձինք փորձելու են նաեւ յաջորդ տարուայ ընտրութիւններում թափանցել խորհրդարան: Եւ արդեո՞ք նրանց նպատակների իրականացմանը չի նպաստում այն ընտրողը, որը, մի կողմ թողնելով քաղաքական անձանց, պատգամաւոր, հետեւաբար՝ իր ճակատագիրը որոշող է դարձնում նման մարդկանց:

Վարուժան ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԱՂԵՏՏԱՆԳՈՒՄԻՆ

Միջազգային սեմինար Երեւանում

Յունիսի 10-11-ին կառավարութեան ընդունելութիւնների տանը ՀՀ ԱԳ նախարարութիւնը եւ ԵԱՀԿ Հակամարտութիւնների կանխարգելման կենտրոնը համատեղ կազմակերպել էր սեմինար՝ «Վարքի կանոնակարգի կիրարկումը անվտանգութեան ռազմաքաղաքական ասպեկտների եւ փոխվստահութեան ամրապնդման միջոցների հարցերում. հայեացք Կովկասից» թեմայով:

Սեմինարին մասնակցում էին ՀՀ ԱԳ, արդարադատութեան եւ ուժային նախարարութիւնների, ԱԺ-ի, ԵԱՀԿ Երեւանի գրասենեակի, Հայաստանում ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանութիւնների ներկայացուցիչներ, նաեւ՝ Երեւան ժամանած եւրոպական փորձագէտներ:

Բացմանը սեմինարի նշանակութեանը հակիրճ անդրադարձան ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Թաքուլ Մարգարեանը, Հայաստանում ԵԱՀԿ դեսպան Ռոյ Ռիւը: Սեմինարի ընթացքում ելոյթով հանդէս եկաւ Աժ պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ Վահան Յովհաննիսեանը: Նա մասնաւորապէս նշեց, որ Հայաստանում զինուած ուժերի հանդէպ հասարակական վերահսկողութեան մեխանիզմների կիրառման ներկայիս վիճակը հեռու է բաւարար լինելուց: Այնինչ, դրանք կարող են բաւական գործուն նշանակութիւն ունենալ հասարակութիւն-զինուած ուժեր բնականոն յարաբերութիւնների հաստատման եւ, որ առաւել էական է, Հայաստանում եւ տարածաշրջանում ժողովրդավարական նորմերի ամրապնդման դիտանկիւնից: Ինչն, իր հերթին, կարեւոր գործօն կարող է դառնալ հակամարտութիւնների կարգաւորման համար: Մասնակիցների խօսքերով, «Վարքի կանոնագիրքը» ԵԱՀԿ քաղաքականօրէն պարտաւորեցնող հիմնական փաստաթղթերից է, որն արտացոլում է անդամ երկրների համաձայնութիւնը՝ համագործակցելու անվտանգութեան քաղաքական ու ռազմական ոլորտների շուրջ: Այն կանոնակարգում է միջպետական եւ ներպետական նպատակներով զինուած ուժերի օգտագործման եւ ժողովրդավարական վերահսկման նոր նորմերը: Այս տեսակէտից, կանոնագրքի նպատակն է մեծացնել զինուժերի վարքի կանխատեսելիութեան ու թափանցիկութեան գործօնը՝ դրանով նպաստելով հակամարտութիւնների կանխարգելման գործին:

Ինքնավստահության զոհ ԱԺ

Խորհրդարանական վերջին եռօրեայի ընթացքում ստեղծուած ճգնաժամային իրավիճակը հնարաւոր էր յաղթահարել, եթէ մեծամասնութիւնը կարողանար խնդրի հանգուցալուծումը գտնել, ասել է թէ՝ օրէնսդիրի բնականոն գործունէութիւնը հնարաւոր էր չխախտել, եթէ «Միասնութիւնը» կարողանար դուրս գալ տիրական կեցուածքի շրջանակներից եւ փոխզիջումների եզրեր գտնել:

Բելլա ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Այս տեսակէտն արտայայտեցին գրեթէ բոլոր խումբ-խմբակցութիւնների խօսնակները: Մասնաւորապէս, Կոմկուսը նկատում է, որ «մեծամասնութիւնը չի հասկանում իր դերն ու նշանակութիւնը եւ ճիշտ չի կառուցում իր յարաբերութիւնները փոքրամասնութեան հետ»: «Հայաստան» խմբի ղեկավար Մեսսնիկ Մալխասեանի մէջ էլ հարց է առաջացել, թէ ՀՀ նախագահը արդեօ՞ք մեծամասնութեանը չի հարցնում. «Էլ դուք ո՞ւմ էք պէտք, եթէ 5-6 հոգին եղանակ են ստեղծում»: Պատգամաւորը նաեւ ասում է (թէեւ կոնկրէտ անուններ չի հրապարակում), որ ոմանք այս ամէնից յետոյ փորձում են արդարանալ, թէ իրենք չէին կարող այդ 5 հոգուն ամբիոնից հեռացնել, որովհետեւ «Հայաստան» խմբի անդամները դահլիճում էին: Իսկ «Ժողովրդական պատգամաւոր» խմբի անդամ Յովհաննէս Յովհաննիսեանը նկատում է. «Ընդդիմութիւնը տակտիկական քայլ կատարեց՝ մեծամասնութեան անուշադրութիւնից եւ ինքնավստահութիւնից օգտուելով», քանի որ «Հոկտեմբերի 27-ի» յանցանաժողովի եզրակացութեան վերաբերեալ որեւէ առարկութիւն չեղաւ:

«Օրինաց երկիր»-ի կարծիքով էլ, հանգուցալուծում գտնելը մեծամասնութեան գործն էր, ինչը չարուեց: Ի դէպ, Արթուր Բաղդասարեանը ընդդիմութեանը հաճոյանալու փորձ կատարեց՝ ասելով, թէ «այսօր Հայաստանում օրէնք չկայ. ով փող ունի՝ օրէնքը մի բան է ասում, իսկ ով չունի՝ մի այլ բան»: Ճիշտ հակառակ կարծիքին է պատգամաւոր Յովհաննէս Յովհաննիսեանը. «Ի տարբերութիւն «Օրինաց երկիր»-ի, ես իմ երկրի մասին լաւ կարծիք ունեմ եւ չեմ կարծում, որ օրէնքները չեն գործում: Իհարկէ, կան դէպքեր, երբ օրէնքները շրջանցւում են, բայց դա չի կարելի ընդհանրացնել»: Այսուհանդերձ, չի բացառւում, որ շուտով «Օրինաց երկիրը» հակադրուի ինքն իր տեսակէտին: Փաստելով ճիշտ հակառակը, եթէ հաշուի առնենք այն իրողութիւնը, որ Սերգոյ Երիցեանը յայտարարեց, թէ կողմ են նախագահի պաշտօնանկութեան որոշման նախագծի քննարկումներին, իսկ յետոյ Արթուր Բաղդասարեանը յայտարարեց, որ խմբակցութիւնը դէմ է, քանի որ, իր մեկնաբանութեամբ, կանոնակարգը թոյլ չի տալիս այդ ճանապարհով որոշման նախագիծ ներկայացնել ԱԺ-ին: Իհարկէ, այս ամէնը մտածելու տեղիք է տալիս, յատկապէս այն տեսանկիւնից, որ որոշ քաղաքական ուժեր այսօր ստեղծուած իրավիճակում դեռ կողմնորոշուելու խնդիր ունեն:

ԱԺ-ի վերջին եռօրեան փաստեց, որ խորհրդարանը ճգնաժամ է ապրում: Քաղաքական ուժերից Կոմկուսը կրկին յիշեցնում է, որ «վաղուց էր պէտք այս ԱԺ-ն արձակել, քանի որ մեծամասնութիւնը չի արտայայտում ուժերի իրական յարաբերակցութիւնը»:

Եւ քանի որ քաղաքական ուժերը տապալուած եռօրեայի պատճառը «Միասնութեան» թուլութիւնը համարեցին, ապա տրամաբանական էր, որ Գալուստ Սահակեանը ինչ-որ ձեւով պէտք է պատասխանէր այդ ամէնին: Նա չպէտք է յարաբերութիւններն էլ աւելի սրէր ընդդիմութեան հետ, ուստի եռօրեայում կատարուածը համարեց շրջապտոյտ անձերի եւ ոչ քաղաքական ուժերի միջեւ ու կարծիք յայտնեց. «Ելնելով Հարաւային Կովկասի պրոբլեմներից եւ աշխարհում կատարուող պրոցեսներից՝ կարելի է ասել, որ այս ամէնը դրսի ուժերն էին կազմակերպել»: Անտրամաբանական այս տեսակէտի նպատակն է՝ իրեն սպառած ԱԺ-ն փրկել լուծարումից եւ կատարուածը համարել պարզապէս «սովորական օրինազանցութիւն»:

ՀՅԴ խմբակցութիւնն էլ հանդէս եկաւ յայտարարութեամբ ՀՀ նախագահին եւ ԱԺ-ի ղեկավարին կոչ անելով քայլեր ձեռնարկել՝ «ստեղծուած վիճակի պատճառները վերացնելու, երկրի հեղինակութիւնը անօրինական գործողութիւններից պաշտպանելու ուղղութեամբ»:

ԱՍՈՅԹ

Վարորդական «մանդատ»

Խորհրդարանական ճեպազրոյցների ընթացքում տրամաբանական էր, որ եռօրեայի ընթացքում «Հայաստան» խմբի անդամ Յակոբ Յակոբեանի պահուածքը եւ պատգամաւորական մանդատը շպրտելը ինչ-որ կերպ մեկնաբանուէր խմբի ղեկավար Մեսսնիկ Մալխասեանի կողմից, բայց այն, ինչ ասուեց, ոչ միայն ...երգիծական էր, այլեւ մէկ անգամ եւս ցոյց տուեց, որ պատգամաւորները չեն կարեւորում պատասխանատուութիւնը ոչ իրենք իրենց հանդէպ եւ ոչ էլ խորհրդարանի: Այն հարցին, թէ ինչպէ՞ս կ՚որոշուի Յակոբ Յակոբեանի իրաւական ճակատագիրը, Մեսսնիկ Մալխասեանը կատակով պատասխանեց. «Յակոբ Յակոբեանի ճակատագիրը նո՞ր պէտք է որոշուի»: Յետոյ, երբ պատգամաւորին յստակ դարձաւ հարցի բովանդակութիւնը, նա «ճշտեց» ասելով. «Բայց ո՞վ է ասել, որ նա իր լիազօրութիւնները վայր է դրել: Նա մանդատը չի շպրտել, այլ վարորդական իրաւունքն է շպրտել»:

Մ. Մալխասեանը իր խմբի անդամի պահուածքն ու հայհոյանքները ոչ միայն չդատապարտեց, այլեւ հումորի վերածեց ու միաժամանակ մատնացոյց արեց այլոց ասելով, որ «մինչեւ պարոն Յակոբեանին պատժելը էլի մարդիկ կան, որ պէտք է նրանցից սկսել»: Իհարկէ, այս դէպքում էլ կոնկրէտ անուններ չտուեց եւ միայն ակնարկեց «որոշ մարդկանց»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային ժողովի վերջին եռօրեայում կատարուածից անհրաժեշտ է թէ քաղաքական, թէ իրաւական հետեւութիւններ անել դրանից բխող համապատասխան գործողութիւններով: Հակառակ դէպքում հնարաւոր կը դառնայ անօրինական մեթոդներով պարբերաբար կազմալուծել երկրի օրէնսդիր մարմնի աշխատանքը:

Քննարկելով ստեղծուած կացութիւնը արձանագրում ենք հետեւեալը.

հանրապետութեան նախագահի պաշտօնանկութեան հարցը ԱԺ եռօրեայ նիստերի օրակարգ մտցնելու փորձը չէր բխում ոչ ՀՀ գործող Սահմանադրութեան, ոչ ԱԺ կանոնակարգի դրոյթներից, ներքաղաքական մթնոլորտը շիկացնող գործողութիւնները, գիտակցաբար կամ ոչ, թուլացնում են պետականութեան հիմքերը դուռ բացելով արտաքին ազդեցութիւնների ուժեղացման, երկրի ինքնուրոյնութիւնը սահմանափակող քայլերի առջեւ,

անօրինական եւ դատապարտելի են մի խումբ պատգամաւորների կողմից օրէնսդիր մարմնի աշխատանքը տապալելուն ուղղուած գործողութիւնները,

անթոյլատրելի ու դատապարտելի են Ազգային ժողովի նիստերի դահլիճում ծեծկռտուք հրահրելը կամ հայհոյանքներով արտայայտուելը:

Մեր գնահատմամբ, ստեղծուած իրավիճակը խորհրդարանական ճգնաժամի տարրեր է պարունակում, ինչը, քաղաքական ուժերին հարկադրում է պատճառների լուրջ վերլուծութիւն անել եւ իրաւական լուծումներ գտնել:

Մեր բոլոր գործընկերներին յորդորում ենք գիտակցել, որ իրենք ՀՀ բարձրագոյն օրէնսդիր մարմնի անդամ են, պետութեան հեղինակութեան ու վարկի կրողներ եւ պարտաւոր են հարցեր քննարկել, քաղաքական պայքար ծաւալել բացառապէս օրինական ճանապարհով:

Ազգային ժողովի ղեկավարութեանը եւ հանրապետութեան նախագահին կոչ ենք անում իրենց լիազօրութիւնների շրջանակում քայլեր ձեռնարկել ստեղծուած վիճակի պատճառները վերացնելու, երկրի հեղինակութիւնը անօրինական գործողութիւններից պաշտպանելու ուղղութեամբ:

ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցութիւն

էջ 1

«Ամբիոն» օպերացիան շարունակւում է

Խորհրդարանի ղեկավարի այս դիրքորոշմանը համամիտ էր ամբիոնի գրաւումը մասնակից «Իրաւունք եւ միաբանութիւնը», քանի որ Հայկ Բաբուխանեանը առաջարկեց՝ խորհրդարանի ճգնաժամը յաղթահարելու համար երկու կողմերն էլ դիմեն Սահմանադրական դատարան: Խորհրդարանական մեծամասնութիւնը, իհարկէ, հէնց սկզբից յստակ յայտարարեց, որ նման խնդիր չունի, քանի որ ընդդիմադիրների պահանջը իրաւական տեսանկիւնից հիմնաւորուած չէ, այդուամենայնիւ, գործողութիւններից կարելի է հետեւութիւններ անել, որ «Իրաւունք եւ միաբանութեան» ՍԻՄ-ի թեւը, չմասնակցելով ամբիոնի գրաւմանը, առաջարկելով փոխզիջումների ճանապարհ, փաստում է, որ «Իրաւունք եւ միաբանութիւն» խմբակցութիւնը նախագահի իմպիչմենտի հարցում որոշ ներքին անհամաձայնութիւններ ունի: Թէեւ Հրանտ Խաչատրեանը նշում է, որ իրենք ոչ թէ սկզբունքային փոխզիջումների կողմնակից են, այլ անհրաժեշտ են համարում հարցը քննել ՍԴ-ում, «քանի որ ԱԺ նախագահը խախտում է օրէնքը»: Իսկ այն հարցին, թէ ՍԻՄ-ը, այնուամենայնիւ, ինչո՞ւ չմասնակցեց ամբիոնի գրաւմանը, Հ. Խաչատրեանը պատասխանեց. «Մեր մասնակցութիւնը դահլիճից էր, եւ պէտք է ակցիային ամբողջովին նայել, այլ ոչ թէ առանձին-առանձին: Երբ ես տեսնում եմ, որ մի գործ առանց ինձ էլ է առաջ գնում, գերադասում եմ աւելի կարեւոր տեղում լինել, իսկ գործը առաջ է գնում, քանի որ Արմէն Խաչատրեանի անօրինական վարքագիծը բացայայտուեց ժողովրդի աչքին»:

Վերջին ասուածը եւս մէկ անգամ հաստատում է այն տեսակէտը, որ, իսկապէս, խնդիրն այն էր, որ հարցը ներկայացուի ամբիոնից համոզելու համար ժողովրդին, որ միակ մտահոգը ընդդիմութիւնն է: Պարզ մի խաղաքարտ, որը գործի է դրւում ընտրութիւնների ժամանակ: Սակայն այս դէպքում այնքան գերադասուեց սուբյեկտիւ շահը, որ խորհրդարանն անգամ վերածուեց մի վայրի, ուր հնարաւոր դարձաւ միմեանց հասցէին շպրտել ամենաստորացուցիչ հայհոյանքները՝ այսպիսով խախտելով օրէնսդիրի բնականոն գործունէութիւնը, յետագայում ասելու համար, որ «պայքարում էինք երկիրը փրկելու համար»:

Աւելի մասնաւորեցնելով վերոյիշեալը՝ մէջբերենք այն ընդհարման տեսարանը, որ կատարուեց խորհրդարանում յունիսի 11-ին: Երբ ընդդիմադիրները շարունակում էին չհեռանալ ամբիոնից, դահլիճ մտաւ «Հայաստան» խմբի անդամ Յակոբ Յակոբեանը եւ առաջարկեց «իշոտնուկ բերել ու օբշի նստել»: Այս իրավիճակում տեղից վեր կենալով՝ դէպի ամբիոն գնաց մեծամասնական ընտրացուցակով ընտրուած Լեւոն Սարգսեանը եւ հարուածեց Արամայիս Բարսեղեանին: Քաշքշուկից մի քանի վայրկեան յետոյ մինչ այդ բոյկոտը կ՚ատակի վերածած պատգամաւոր Յակոբ Յակոբեանը ամենայն մանրամասնութեամբ հայհոյանքների մի ամբողջ շարան ուղղեց խորհրդարանի ղեկավարներին եւ, մանդատը շպրտելով դէպի ԱԺ նախագահը, հեռացաւ: Կատարուածից յետոյ ընդդիմադիրներն անմիջապէս անցան այլ տակտիկայի. Մանուկ Գասպարեանը, Ստեփան Զաքարեանը եւ այլք մեծամասնութեանը առաջարկեցին բանակցել, հանդէս եկան նաեւ նիստն ընդհատելու առաջարկներով, թէեւ բանակցութիւններն անպտուղ եղան, եւ, ի վերջոյ, ընդդիմութիւնը հասաւ իր բուն նպատակին՝ իմպիչմենտի հարցը երկարաձգելով մինչեւ աշուն: Այսինքն սպասւում է հանրահաւաքային թեժ ամառ, որը հող կը նախապատրաստի աշնանը քաղաքական դիվիդենտներ շահելու համար: Փաստօրէն, փորձ արուեց հեղինակազրկել խորհրդարանը եւ ակտիւացնել նախագահի հրաժարականի պահանջի շրջանառութիւնը՝ համոզելու համար ժողովրդին, որ «երկրի փրկութիւնը ընդդիմադիրներին վստահելու մէջ է»: Նախընտրական մի իրավիճակ, որն ի ցոյց է դնում ընդդիմութեան իշխանութեան հասնելու պարզ ցանկութիւնը:

Խորհրդարանական վերջին զարգացումները շրջանառութեան մէջ դրեցին նաեւ Ազգային ժողովը լուծարել-չլուծարելու հարցը, եւ որքան էլ մեծամասնութիւնն այսօր փորձում է հիմնաւորել, թէ ստեղծուած իրավիճակն այն հիմքը չէ, որի հիման վրայ պէտք է սկսել լուծարման գործընթաց: Բայց որքան էլ «Միասնութիւնը» պնդի, թէ լուծարելու իրաւական եւ քաղաքական հիմքեր չկան, մի բան անհերքելի է երեք օր շարունակ խախտուեց օրէնսդրական գործունէութիւնը, եղան կարգազանցութիւններ, ծեծկռտուք, հնչեցին հայհոյանքներ, որն, իհարկէ, չի կարելի ասել, թէ քաղաքական սկզբունքների արդիւնք էր, իսկ այս դէպքում անթաքոյց է, որ ԱԺ-ն սպառել է իրեն:

Թագաւորութիւն աւերակների վրայ

Յանձնաժողով՝ առանց արժեթղթերի

Պետական համակարգում այս կամ այն գերատեսչության կառուցվածքային փոփոխությունը բացատրում էին համակարգի գործունեությունը բարելավելու պարզ ցանկությամբ: Օրինակները բազմաթիվ են, արդիւնաւէտութիւնը՝ զրո:

Կարինէ
ՄԱՆԳԱՍԱՐԵԱՆ

«Արմէքս» ֆոնդային բորսայի կենտրոնը մեծ ճոխությամբ ու շնորհաւորանքներով բացուեց: Յոյս յայտնուեց ապագայում ունենալ ֆրանկֆուրտեան, նիւեորքեան կամ նոյնիսկ էլ աւելի խոշոր բորսայի տիպի հաստատութիւն: Սակայն առայժմ առկայ է դատարկ դահլիճ, համակարգիչներ եւ հատուկենտ այցելուներ:

Կառուցուածքը կայ, պարզապէս գրեթէ իսպառ բացակայում է այն նիւթը՝ արժեթուղթը, որը պէտք է կարգաւորել եւ վերահսկել:

Նախագահի հրամանով 2000 թուականին ստեղծուեց Արժեթղթերի անկախ յանձնաժողովը: Մինչ 2000 թ. այդ շուկայի վերահսկողությունը իրականացնում էր ֆինանսների նախարարությունում գործող արժեթղթերի վարչությունը: Շուկայի անկախ, անաչառ կարգաւորման սկզբունքը կարեւոր է (իսկ որտե՞ղ կարեւոր չէ), այդ իսկ պատճառով կոռուպցիան բացառելու համար այս յանձնաժողովի աշխատակիցների աշխատավարձերը սահմանուեցին բաւականին բարձր, ինչն էլ ժամանակին մեծ աղմուկ բարձրացրեց: Հիմա թէեւ բիւջէի սղութեան պատճառով աշխատավարձերը նուազել են, բայց շարունակում են անհամեմատ բարձր մնալ միւսներից:

Յանձնաժողովը ստեղծուած է ոչ թէ ղեկավարելու, այլ արժեթղթերի շուկան կարգաւորելու համար: Համապատասխան օրէնքներ ունենք՝ եւ «Արժեղթղերի շուկայի», եւ «Բաց բաժանետիրական



ընկերությունների» մասին: Բայց սկսենք նրանից, որ պլանային տնտեսությունից միանգամից շուկայականին անցնելու գործընթացը հարթ եւ փարժէք իրականացնելու ցանկությունը հեռու էր իրականությունից: Սեփականաշնորհումն անցաւ ակնյայտ ապօրինություններով, եւ ով այդ պահին տնօրինում էր այս կամ այն ձեռնարկությանը, տէր եղաւ ձեռնարկության բաժնետոմսերի մեծամասնությանը: Աշխատաւորին նոյնպէս «չմոռացան» եւ 20 տոկոսը անհատոյց կերպով տուեցին կոլեկտիւին: Սակայն սա չի նշանակում, որ բաժնեմասը փոքր է, ուրեմն տուեալ մարդը զրկուած է ձեռնարկության կառավարմանը մասնակցելու իրաւունքից: Եթէ 2001 թուականին յանձնաժողովում վիճայարոյց գործեր չեն գրանցուել, ապա 2002-ին բաժնետէրերի մօտ օրէնքով սահմանուած կարգով սեփական իրաւունքների պաշտպանության միտում է նկատուում, չնայած երբեմն դրանք մեր դատարաններում չհիմնաւորուած լուծում են գտնում: Նման մի որոշում կայացուել է 2001 թուականի օգոստոսին Կենտրոն-Նորք-Մարաշ առաջին ատեանի դատարանի կողմից, երբ ԱԺ պատգամատր Մանուկ Գասպարեանը փորձում էր պաշտպանել իր՝ որպէս բաժնետիրոջ իրաւունքները: «Գալանտ» ԲԲԸ-ի՝ 1996 թուականի նոյեմբերին կայացած բաժնետէրերի խորհրդի նիստում անօրինական օրէնքով ընդունած որոշման շուրջ հաձնաժողովի դիրքորոշումը հիմնատրուած է եղել այդ նիստի արձանագրության տուեալների վրայ, եւ քանի որ դեռեւս 1996-ին ընդունած ապօրինի որոշումը բեկանելու իրաւունք արժեթղթերի յանձնաժողովը չուներ, մնում էր զգուշացնել բաժնետէրերին այսուհետ որոշումները կայացնել օրէնքի համաձայն: Այնինչ պատգամաւորի կողմից յանձնաժողովի որոշումը վիճարկելու բողոքի առնչությամբ կայացրած դատավճռով որոշուել է անվաւեր համարել «Գալանտ» ԲԲԸ բաժնետէրերի կողմից 1996 թուականին ընդունած որոշման արդիւնքները, որոնց համար յանձնաժողովը ոչ մի պատասխանատուություն չէր կրում: Ըստ արժեթղթերի յանձնաժողովի կորպորատիւ կառավարման վարչության պետ Կարէն Թունեանի, բաց բաժնետիրական ընկերությունների միջեւ գոյություն ունեցող հակասությունների հիմնական պատճառը կորպորատիւ կառավարման կուլտուրայի բացակայությունն է, քանի որ որոշ խոշոր բաժնետէրեր շատ յաճախ իրենց նոյնացնում են ձեռք բերած փաթեթի հետ եւ չեն պարտաւորուում օրէնքով սահմանուած կարգով հրաւիրել բաժնետէրերի խորհրդի նիստ՝ ներկայացնելու համար ամփոփ տեղեկատուություն ձեռնարկության գործունէության մասին: Անտեսւում են մանր բաժնետէրերի իրաւունքները, եւ յանձնաժողովին ներկայացրած պարզաբանումներում ընկերությունների խոշոր բաժնետէրերը իրենց նման դիրքորոշումը հիմնաւորում են այն հանգամանքով, որ արտագաղթի պատճառով նրանցից շատերը երկար ժամանակով բացակայում են երկրից: Ասել է թէ՝ եթէ ունես սեփականաշնորհուած բնակարան, բայց այնտեղ չես ապրում, հարեւանդ կարող է հանգիստ դուռը ջարդել եւ մտնել նե՞րս: Յանձնաժողովը բաւական կոշտ դիրքորոշում ունի նման մօտեցման հանդէպ: Նշենք, որ վերջերս նմանատիպ խնդիր էր ծագել «Աբովեանի գարեջրի գործարանի» պարագայում, երբ խոշոր բաժնետէրերը փորձում էին «ազատուել» մանր բաժնետէրերից: Յանձնաժողովի գործընթացը ապօրինի որակելու որոշումը վիճարկուեց դատարանում, եւ արդիւնքում կնքուած համաձայնագրի շնորհիւ մանր բաժնետէրերի իրաւունքները պաշտպանուեցին: Անշուշտ, ֆրանսիական «Կաստել»-ին, որն այս ընկերության խոշոր բաժնետէր է, ամենեւին ձեռնտու չէր այս գործընթացը հեղինակության տեսանկիւնից, քանի որ դրսում մանր բաժնետէրերի նկատմամբ նման մօտեցումը հաստատապէս բացառւում է:

Արժեթղթերի հիմնական առեւտուրն այսօր իրականանում է Հայաստանի ֆոնդային բորսայի՝ «Արմէքս»-ի եւ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով, որոնք ինքնակարգաւորուող, սեփական կանոնադրությամբ, ոչ պետական մարմիններ են: Վերահսկելու գործառոյթն այստեղ նոյնպէս շատ կարեւոր է, քանզի իւրաքանչիւր բրոկերի կնքած ոչ ստանդարտ պայմանագրերը արժեթղթերի ձեռքբերման համար ուղղակիօրէն անդրադառնում են ողջ կառոյցի հանդէպ վստահության վրայ: «Արմէքս» ֆոնդային բորսայի կենտրոնը մեծ ճոխությամբ ու շնորհաւորանքներով բացուեց: Յոյս յայտնուեց ապագայում ունենալ ֆրանկֆուրտեան, նիւեորքեան կամ նոյնիսկ էլ աւելի խոշոր բորսայի տիպի հաստատութիւն: Սակայն առայժմ առկայ է դատարկ դահլիճ, համակարգիչներ եւ հատուկենտ այցելուներ:

Կառուցուածքը կայ, պարզապէս գրեթէ իսպառ բացակայում է այն նիւթը՝ արժեթուղթը, որը պէտք է կարգաւորել եւ վերահսկել:

Ըստ յանձնաժողովի տուեալների, այսօր Հայաստանում գործում են 150-160 բաց բաժնետիրական ընկերություններ, որոնց գումարած կամ գումարելիք ժողովների յաճախականությունը եւ պարտաճանաչությունը արձանագրելու գործը 60 աշխատակիցը չեն կարող ապահովել: Դա նոյնն է, թէ նոյնչափ աշխատակազմով ոստիկանական վարչությունը վերահսկի ողջ հանրապետության կարգուկանոնը:

Թուեր՝ ոչ յօգուտ շուկայի կայացման

Արժեթղթերի յանձնաժողովի շուկայի կարգաւորման վարչության տեղեկագրով 2002 թուականին «Արմէքս»-ում կայացել է շուրջ 416 միլիոն դրամի գործարք: Թիւը խօսուն է, սակայն եթէ նայենք ամիսների կտրուածքով, նկատում ենք, որ, օրինակ, եթէ ապրիլին կնքուել է 114 միլիոնի գործարք, ապա յաջորդ ամիս 5 միլիոնի: Տարբերությունը զգալի է: Ըստ շուկայի կարգաւորման վարչության ժամանակաւոր պատասխանատու Գոռ Հայրապետեանի, դեռեւս որեւէ լուրջ վերլուծություն այս առումով չի կատարուել, եւ դժուար է որոշակի պատճառներ նշել: Այնուամենայնիւ, այս փաստը չի վկայում ներդրողի կողմից արժեթղթերի ձեռք բերման հանդէպ վստահության մասին, այլ խօսում է այն մասին, որ որոշ «փողատէրեր», ըստ իրենց քմահաճոյքի, ամիս առ ամիս որոշում են այս կամ այն ձեռնարկության փայատէրեր դառնալ՝ միանգամից մեծ թուով արժեթղթեր ձեռք բերելու միջոցով: Իսկ մեր շարքային քաղաքացին արդեո՞ք այս շուկայում անելիք ունի: Չունի, որովհետեւ ոլորտը վստահելի չէ, եւ եթէ որեւէ մէկը ուզում է ներդրում կատարել ոչ թէ բանկում, այլ արտադրական կապիտալի մէջ, պէտք է իմանայ, թէ ինչ է գնում, պէտք է տեղեկանայ՝ տուեալ ձեռնարկությունը զարգանալու միտում ունի՞, թէ՞ մի քանի ամիս յետոյ կը յայտնուի լուծարման եզրին:

Անդրադառնալով մանր բաժնետէրերի խնդրին՝ արձանագրենք. յանձնաժողովը համոզուած է՝ որ շուկան կը կայանայ այն դէպքում, երբ ակտիւանան մանր բաժնետէրերը եւ գիտակցեն իրենց իրաւունքները: Նման միտում՝ դեռեւս փոքր՝ նկատուում է: Յանձնաժողով դիմող բաժնետէրերի զգալի մասը փոքր բաժնեմաս ունեցողներ են, ովքեր փորձում են պահանջել սեփական իրաւունքների պաշտպանությունն խոշոր բաժնետէրերի չարաշահումներից: Բայց խախտում ու ոտնատրում են ոչ միայն փոքրերը, այլեւ ձայնի իրաւունք ունեցող բաժնետէրերը: Դրա փայլուն ապացոյցը «Արարատ տրեստ» ԲԲԸ-ն է, որ բաժնետոմսերի 37 տոկոսին տիրապետող եօթ սփիւռքահայերի մասնակցությունը դրուել հարցականի տակ, իսկ մեր տնտեսության մէջ հարցերն այդպէս լուծւում են այն դէպքում, երբ պետական հովանաւորությունը փորձում է հարցերը լուծել սեփական գրպանը ապահով պահելու հաստատակամության սկզբունքով: Յանձնաժողովը պահանջել էր ընկերության ռէեստրը յանձնել կենտրոնական դեպոզիտարիայ, որը ցոյց կը տար, թէ ով ի՞նչ ունի:

Յանձնել խուսափել էին, հետեւապէս բաժնետոմսերի վիճարկման հարցը տեղացի սեփականատիրոջ ցանկությունն էր: Մինչդեռ «Հայրենիք-Սփիւռք» վերջին խորհրդաժողովին տեղացի գործարարը ընկերաբար խորհուրդ է տուել սփիւռքահայ գործարարին՝ արժեթղթեր ձեռք բերելով մասնակցել հայրենիքի տնտեսության զարգացմանը՝ պատճառաբանելով, որ սեփական նոր գործ սկսելու դէպքում մշտական ներկայությունը պարտադիր է: Ցանկությունը գովելի է, բայց դժուար թէ խաբէության նման օրինակը ազդակ հանդիսանայ, թէկուզ արժեթղթեր ձեռք բերելով, հայրենիքում ներդրում կատարելու համար: Չխաբենք ոչ մեզ, ոչ ուրիշներին:

Խուսափում են, քանզի վախենում են

Եթէ զարգացած երկրներում արժեթղթերի շուկայում ներդրողների ու բրոկերների միջեւ գործարքները կատարւում են պարզ հեռախօսազանգի, ասել է թէ՝ վստահության հիմնաւորումով, ապա մեզ մօտ պատկերն այլ է: Նորություն չէ, որ զարտուղի ճանապարհներով մեծ ֆինանսների տիրապետողները խուսափում են հասարակության մէջ կարծիք ստեղծել, որ իրենք այս կամ այն խոշոր ընկերության բաժնետէրեր են: Հիմքեր կան խուսափելու, նոյնատիպ հիմքերով խուսափում են նաեւ պետական պաշտօնեաները յայտարարագրել իրենց ունեցուածքը: Մերոնք խուսափում են, իսկ ահա օտարերկրացին մեզ մօտ արժեթուղթ գնելու համար իր մասին ներկայացնում է մանրամասն տեղեկատուություն: Թերեւս, անկեղծ են նաեւ մերոնք, միայն թէ՝ արտասահմանում այս կամ այն օտար ընկերության արժեթղթեր ձեռք բերելիս:

Չնայած այս ամենին՝ արժեթղթերի շուկան զարգացման փուլում է կամ փորձում է զարգանալ: Իսկ դրա համար անհրաժեշտ են որոշակի օրէնսդրական փոփոխություններ: Անհրաժեշտ է հասարակության մէջ այս շուկայի արդիւնաւէտության հանդէպ վստահության մթնոլորտ ստեղծել:

Ժամանակն է, որ բաժնետիրական գաղափարախօսության հիման վրայ ստեղծուելիք ընկերությունների թիւն աւելանայ, հակառակ դէպքում, պարտադրուած սեփականաշնորհման արդիւնքում, պատահականօրէն եւ հիմնականում իշխանական լծակներ ունեցող բաժնետէրերի միջեւ հակասությունները միշտ էլ առկայ են լինելու:

Արիմիութենական «ռեներսանս»

Հայաստանի սոցիալական եւ տնտեսական ոլորտների ազատականացումը, սպասուածին հակառակ, իր դրամաբանական ազդեցությունը չունեցաւ աշխատաւոր խաւերի շահերի պաշտպանության հասարակական գործընթացների ակտիւացման վրայ: Ի սկզբանէ դարերայնօրէն ձեւաւորուող իրաւա-աշխատանքային յարաբերությունների նկատմամբ անցած դասանամեակում իրենց անկարողությունը դրսեւորեցին խորհրդային մոդելի «կցորդ» արիմիությունները: Այնուհանդերձ, դրանց փոխարինելու կոչուած նորօրեայ արիմիութենական ինստիտուտը վերջին մէկ-երկու տարում սկսել է սաղմնային կացությունից դուրս գալու կամ նոր որակով «վերածնուելու» ակնյայտ միտումները դրսեւորել:

Տիգրան ՍԻՄՈՆԵԱՆ

Հայաստանում արիմիությունների կայացման գործընթացը այլեւս չունի այլընտրանք: Եւ այդ առումով «Ալիքի» ղեկավարը լուրջ նշանակություն է տալիս ներքին կազմակերպական եւ աշխատաւորական խաւերի հետ տարուելիք բացատրական աշխատանքներին:

«Ալիք» արհեստակցական կազմակերպությունների միության (ԱԿՄ) նախագահ Կարէն Մխիթարեանի գնահատմամբ գործընթացում նկատուող դրական տեղաշարժերը հիմնականում պայմանաւորուած են արիմիությունների մասին օրէնքի ընդունմամբ: «Նոր արիմիությունների առանձնայատկությունն այն է, որ նոր օրէնքով հնարաւորություն տրուեց մէկ շեշտադրմամբ կարգաւորել գործատու-աշխատաւոր յարաբերությունը:

«Ալիքը», որ հիմնուել է 2001 թ. դեկտեմբերին եւ ներկայումս ունի շուրջ 1400 անդամ, իր գործունէությունը արդէն փորձում է ծաւալել միանգամից հինգ ոլորտներում՝ տրանսպորտ, կապ, առողջապահություն, կրթություն եւ առեւտուր: Այս հանգամանքը անցած մէկ եւ կէս տարուայ ընթացքում «Ալիք» ԱԿՄ-ին հնարաւորություն է ընձեռնել ըստ էության ըմբռնելու մի կողմից՝ առանձին ոլորտներում, միւս կողմից՝ ընդհանուր դաշտում գործատուի եւ աշխատաւորի միջեւ ծագող հակասությունների դրդապատճառները, նաեւ՝ այն լուծումները, որոնք անհրաժեշտ են դրանց յաղթահարման համար:

Առեւտրի ոլորտի պարագայում, օրինակ, ըստ «Ալիքի» ղեկավարի, հիմնական բարդությունները գալիս են նրանից, որ շատ դէպքերում գտնուելով հարկային դաշտից դուրս՝ առեւտրականները նախապատւությունը տալիս են «շեֆի» հետ խիստ անձնաւորուած յարաբերություններին՝ խուսափելով միաւորուած կերպով իրենց ընդհանուր շահերին հետամուտ լինելու քաղաքակիրթ եղանակից: «Ճիշտ շեշտադրում» հասկացության տակ թերեւս հարկ է առաջին հերթին տեսնել աշխատանքի շուկայի իրաւական կարգաւորման խնդիրը, որը, «Ալիքի» նախագահի բնորոշմամբ, «տակաւին մնում է ֆայլաբազարի մակարդակի վրայ»: Եւ այդ էլ այն դէպքում, երբ որակեալ աշխատուժի պահանջարկը մի քանի անգամ գերազանցում է առաջարկը:

Կարէն Մխիթարեանը յատուկ կարեւորեց պետության կարգաւորիչ դերի բարձրացումը, ինչը կարեւոր նախապայման է արիմիությունների կայացման ճանապարհին: Նախ՝ միջին օղակներում բիւրոկրատական չարաշահումները կանխելու համար հարկ է, որ օրինակ, ուսուցիչը ուղղակի պայմանագրային յարաբերությունների մէջ մտնի գործատուի, դիցուք՝ կրթության նախարարության հետ: Եւ այս մեխանիզմը, ըստ ԱԿՄ կրթության ոլորտի պատասխանատու Վաղարշակ Ոսկանեանի, առաւելապէս թելադրուած է այն պարզ իրողությամբ, որ «Հայաստանում հասարակական անկատար յարաբերությունները ուղիղ համեմատական են օրէնսդրական դաշտում տիրող վիճակին»: Բայց, իհարկէ, դա իբրեւ միջանկեալ տարբերակ է պէտք ընդունել, քանզի ԱԿԸ ղեկավարության համոզմամբ, վաղ թէ ուշ, իրաւա-աշխատանքային բնոյթի հիմնահարցերը տեղափոխուելու են արիմիությունների իրաւասության դաշտ: Ի դէպ, նման նախադէպ գրանցուել է բոլորովին վերջերս, երբ, ի պատասխան Երեւանի տրամուայի հաւաքակայանի աշխատակազմի բողոքի, «Ալիքը» ստանձնեց նրանց արհեստակցական շահերի պաշտպանությունը: ԱԿՄ տրանսպորտի ոլորտի պատասխանատու Էդուարդ Ասլանեանը այդ կապակցությամբ կարեւորեց այն փաստը, որ «հաւաքակայանի եւ քաղաքապետարանի տրանսպորտի վարչության հետ տարուած բանակցությունների արդիւնքում «Ալիքը» պատրաստւում է ստորագրել կոլեկտիւ պայմանագրի՝ ի շահ երրորդ կողմի՝ աշխատաւորական կոլեկտիւի»:

Հայաստանում արիմիությունների կայացման գործընթացը այլեւս չունի այլընտրանք: Եւ այդ առումով «Ալիքի» ղեկավարը լուրջ նշանակություն է տալիս ներքին կազմակերպական եւ աշխատաւորական խաւերի հետ տարուելիք բացատրական աշխատանքներին՝ «ոչնչի չենք հասնի, քանի դեռ աշխատաւորը լաւ չի պատկերացնում իր շահերն ու իրաւունքները եւ անձնապէս շահագրգռուած չէ իր պահանջների առաջադրման հարցում»: Աւելին: Կարէն Մխիթարեանի համոզմամբ, լուրջ անելիքներ կան արիմիությունների անկախությունը երաշխաւորող քաղաքակիրթ մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Մասնաւորապէս՝ վկայակոչելով «ԱրմէնՏելում» գործող արիմիության օրինակը, բանախօսը նկատեց, որ խորհրդի որոշ անդամներ, հանդիսանալով «ԱրմէնՏելի» աշխատակից, փաստօրէն ֆինանսական կախուածության մէջ են ընկերության ղեկավարությունից, ինչը անթոյլատրելի է միջազգային նորմերի տեսանկիւնից: Ըստ «Ալիք» ԱԿՄ-ի նախագահի, արժէ ուսումնասիրել դարասկզբի արիմիութենական շարժումը, որի շնորհիւ 1920 թուականին տեղի ունեցաւ հայկական արիմիությունների նախաձեռնած առաջին շքերթը:

Կանխիկի «միջանցքը» նեղանում է

Կառավարության յունիսի 13-ի նիստում հաւանություն է տրուել դրամարկղային գործառնությունների մասին օրէնքի նախագծին, որով, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Տիգրան Խաչատրեանի բնորոշմամբ, խթանուելու է տնտեսական դաշտի լեգալացման գործընթացը:
Մեկնաբանելով նախագծում տեղ գտած երկու կարեւոր սահմանափակումների էությունը փոխնախարարը տեղեկացրեց, որ, ըստ առաջին սահմանափակման, ընկերությունները մէկանգամեայ գործարքները կարող են կատարել կանխիկ դրամով, եթէ գործարքի արժէքը չի գերազանցում 500 հազար դրամի չափը: Այսինքն այդ գումարը գերազանցող գործարքների դիմաց կը վճարուի անկանխիկ սկզբունքով: Կանխիկ դրամաշրջանառության այս չափաբաժինը կը գործի 2003 թ. համար: 2004-ին այն կը կազմի 300 հազար, իսկ 2005-ին՝ 100 հազար դրամ:
Դրանից բացի, նախագծում տեղ է գտել մէկ այլ ուշագրաւ սահմանափակում. 2003 թուականին (մէկամսեայ ժամկէտի համար) կազմակերպությունները չեն կարող կատարել 5 մլն դրամը գերազանցող կանխիկ գնումներ: 2004 եւ 2005 թուականների համար սահմանուած առաւելագոյն չափաքանակները կազմելու են են 3 եւ 1 մլն դրամ:
Յաջորդ սահմանափակումը, որը պրն փոխնախարարը տեղին գտաւ ընդգծել, վերաբերում է հաշիւ չունեցող անձանց տրուող գումարների կանոնակարգմանը եւ նրանց կողմից ներկայացուող հաշուետուությունների նկատմամբ առաջադրուելիք պահանջներին: Նախատեսւում է, որ կազմակերպության դրամարկղից բանկային հաշուեհամար կամ հակառակ ուղղությամբ փոխանցումները պէտք է իրականացուեն առաւելագոյնը մէկօրեայ ժամկէտում:

Սեփ. լր.

ՆԱՄԱԿԱՆԻ

«Երկիր» թերթի յարգելի խմբագրութիւն

Ձեզ ենք դիմում խնդրանքով օգնելու մեզ կամ խորհուրդ տալու, թէ ո՞ւմ դիմենք մեր շէնքի բնակիչների դէմ «Ամբասադոր» ռեստորանի տէրերի ագրեսիան (որեւէ այլ բառ պարզապէս տեղին չի լինի) դադարեցնելու համար: Անհասկանալի է, թէ քաղաքապետարանը ինչպէ՞ս կարող էր ռեստորանի շինարարության թոյլտուութիւն տալ բնակելի չորսյարկանի շէնքում: Մարդիկ ռեստորան են գալիս ժամանակ անցկացնելու, պարելու, երաժշտություն լսելու. այդ ամէնը հասկանալի է: Բայց չէ՞ որ ռեստորանի վերեւում մարդիկ են ապրում երեխաներ, ծերեր, հիւանդներ եւ այլն: Բայց ռեստորանի տէրերին այդքանը բաւարար չէր: Անցեալ տարուայ աշնանը նրանք «թոյլտուութիւն են ստացել» բակի կողմից խոհանոցի օժանդակ կառոյցի շինարարության համար: Այդ շինարարության համար բնակիչներն իրենց համաձայնությունը չեն տուել, ինչը նման դէպքերում պարտադիր է: Շինարարները կտրեցին բալենիները, մարգերը եւ խաղողի այգին, որ մենք աճեցրել էինք 25 տարիների ընթացքում: Մենք խնդրեցինք, բողոքեցինք, դիմեցինք քաղաքապետին, բայց ամէն ինչ իզուր էր: Այգին ոչնչացուեց, իսկ նրա տեղում վեր խոյացաւ «խոհանոցը» երկյարկանի շէնքը: Հարեւանների մի մասը որոշել է օգտուել դրանից եւ բարձրացնել այդ շէնքը մինչեւ տանիք, այսինքն ընդլայնել իրենց բնակարանների տարածքը: Դրա արդիւնքում շէնքի 6 բնակարաններ կը զրկուեն լոյսից: Բայց, փաստօրէն, դա էլ է քիչ: Հենց մեր պատշգամբների տակ «Ամբասադորը» կառուցում է կաթսայատուն, այսինքն պատրաստւում է տեղադրել դիզէլային վառելիքի բաք եւ դուրս հանել ծխնելոյզ: Դա վտանգաւոր է բնապահպանության տեսանկիւնից նոյնպէս: Մենք դիմել ենք քաղաքապետարան, բայց առայժմ անարդիւնք: Իսկ երբ կառուցեն կաթսայատունը, արդէն ուշ կը լինի:
Յարգելի խմբագրութիւն, շատ ենք խնդրում ձեր թերթում տպագրել մեր այս նամակը, ինչը, յուսով ենք, կը նպաստի վերոյիշեալ ապօրինի գործողությունների դադարեցմանը:

Թումանեան փ. թիւ 1 շէնքի բնակիչներ

Կոնեակը՝ հայկական, ասպղերը՝ ֆրանսիական

Հայաստանում «Պեռնօյ Ռիկարի» գործունէության 4-ամեայ յոբելեանի առթիւ յունիսի 11-ին Երեւանի կոնեակի գործարանում կազմակերպուած հանդիսության ժամանակ թէ ՀՀ նախագահը, թէ «ՊՌ»-ի ղեկավարները դրական գնահատական տուեցին երկկողմ յարաբերությունների առկայ մակարդակին: Կարեւորելով Ռոբերտ Քոչարեանի նախանձախնդիր վերաբերմունքը «Պեռնօյ Ռիկարի» առջեւ անցած չորս տարում ծառացած խնդիրների հանգուցալուծման գործում, ԵԿԳ նախագահ Պիեռ Լաչեռը նկատեց, որ «արտադրանքի պաշտպանուածությունը «Պեռնօյ Ռիկարին» թոյլ է տալիս բարի աչքով նայել ապագային»: Իսկ «Արարատ» անունը կրող կոնեակի ապագան «Պեռնօյ Ռիկարի» գլխաւոր տնօրէն, ԵԿԳ սեփականատէր Թիյերի Բիյոն կարեւոր նախապայման է համարում ընկերության նաեւ այլ արտադրանքների՝ ողջ աշխարհում տարածումը ապահովելու համար: Ըստ պրն Բիյոյի, «Արարատ» կոնեակի գլխաւոր առանձնայատկությունն այն է, որ «այն կարող է լինել ռուսական շուկայի մեր խմբաքանակների լոկոմոտիւը»:

Պիեռ Լառեչին յանձնելով «Անանիայ Շիրակացու» մեդալը Ռոբերտ Քոչարեանն իր խօսքում գոհունակություն յայտնեց յանիրաւի բազմաթիւ շահարկումների ենթարկած «կոնեակի գործարքի» արդիւնքների վերաբերեալ: «Կարծում եմ, ժամանակը ցոյց տուեց, որ գործարքը ճիշտ էր: Բացի այդ, մենք ձեռք բերեցինք որակեալ արտադրանք, նոր շուկաներ...
Այս ընկերությունը, իսկապէս, նոր մշակոյթ մտցրեց վերամշակող ձեռնարկություն-գիւղացի յարաբերություններում»,- նշեց ՀՀ նախագահը:
Հարկ է նշել, որ նախագահի լաւատեսության հիմքում կար ոչ մէկ գործնականօրէն յուսադրող փաստարկ: Ինչպէս տեղեկացրել էր ԵԿԳ գլխաւոր տնօրէն Պ. Լառեչը, գործարանի աշխատակիցների թիւը անցնում է 500-ից: Անցած տարի գործարանի հետ կնքուած պայմանագրերի շնորհիւ կայուն եկամուտներ է ստացել 3000 խաղողագործ: Խաղողի մթերման գինը, որ 2001-ին եղել է 80 դրամ, յետագայում պէտք է բարձրանայ վերընթաց պրոգրեսով:
Եւ որ պակաս կարեւոր չէ՝ տարեկան 6 մլն շիշ կոնեակ արտադրող ընկերությունը մտադիր է, ներկայիս 21-ի փոխարէն, իր արտադրանքը արտահանել 28 երկիր:
Թերեւս, այս տպաւորիչ թուերն էին պատճառը, որ Ռոբերտ Քոչարեանի հարցին «ասէք, այս գործարքը ճիշտ էր, թէ ոչ», լրագրողական լսարանը տուեց միանշանակ դրական գնահատական:

Սեփ. լր.

Մրցունակ տնտեսության պարտադրանքը

Կարող ենք փաստել, որ, այսպես կոչուած, ազգային բարեփոխումների գաստամեայ ժամանակահատուածում չի յաջողուել լուծել այն կառուցուածքային խնդիրները, որոնք բնորոշ էին խորհրդային տնտեսությանը: Այսօր էլ մեր տնտեսությունը ամբողջության մէջ բնութագրւում է ռեսուրսների օգտագործման նուազ արդիւնաւէտությամբ եւ ցածր արտադրողականությամբ:

Շահէն ՄԻՆԱՍԵԱՆ

Երկրի գիտական ու տեխնիկական ներուժը շարունակում է զրկուած լինել պահանջարկից, երկրի արտադրութիւնների գերակշիռ մասը միջազգային չափանիշներով մրցունակ չէ: Հայաստանն այսօր թէեւ 10.000 բնակչի հաշուով գիտնականների եւ ինժեներների թուով աշխարհում առաջնակարգ տեղեր է զբաղեցնում, սակայն մտաւոր սեփականության արդիւնքներով եւ նոր տեխնոլոգիաներով անյոյս աւտսայդերների (յետնապահների) շարքում է: Ակնյայտ է, որ բաց-ազատական տնտեսության պայմաններում, առանց ներդրումների եւ նորամուծութիւնների, երկրի ձեռնարկութիւնների գերակշիռ մասը պարզապէս տեղ չունի արտաքին շուկաներում: Միւս կողմից, աւելի արդիւնաւէտ ու մրցունակ արտադրութիւնների օգտին կապիտալի վերաբաշխման արդիւնաւէտ մեխանիզմների (արժեթղթերի շուկայ, բանկային համակարգ) բացակայութիւնը այդ խնդրի լուծումը դարձնում է աւելի ու աւելի անիրական:

Մինչդեռ Առեւտրի համաշխարհային կազմակերպութեանը (ԱՀԿ) Հայաստանի մօտալուտ անդամակցումը

հարկադրում է կառուցուածքային եւ արդիւնաբերական քաղաքականության խնդիրները դիտարկել միմեանց հետ շաղկապուած: Պատահական չէ, որ մրցունակության խնդիրներին լրջօրէն վերաբերուող շատ երկրներ (Ռուսաստան, Չինաստան, մերձբալթեան երկրներ եւ այլն), ԱՀԿ-ին անդամակցության գործընթացը շաղկապում են իրենց ներքին արտադրողների մրցունակության ցանկալի տեղաշարժերի հետ: Այս առումով, թերեւս, իմաստ ունի Հայաստանի պարագայում եւս համադրել ակտիւ կառուցուածքային քաղաքականության «կողմ» եւ «դէմ» տեսակէտները: Սկսենք «դէմ» տեսակէտից, քանզի հիմնականում հէնց այս գաղափարախօսութիւնն է դրուել Հայաստանի «յոյժ» ազատական բարեփոխումների հիմքում: Աւելորդ չէ նշել, որ Հայաստանի հիմնական ֆինանսական ստնտուները՝ Համաշխարհային բանկը եւ Արժոյթի միջազգային հիմնադրամը, հէնց այս քաղաքականության ջատագովներն են: Համառօտ՝ ակտիւ արդիւնաբերական քաղաքականության «դէմ» տեսակէտներն այսպիսին են՝ ա) պետության կողմից վարուող կառուցուածքային քաղաքականութիւնը աղաւաղում է շուկայական ազդանշանները՝ գները, եւ յանգեցնում անարդիւնաւէտ լուծումների: Սա էլ, իր հերթին, անհամամասնութիւնները վերացնելու փոխարէն ծնում է նորերը եւ յանգեցնում նոր ձեւախեղումների, բ) կառավարության կողմից տնտեսության որոշակի ճիւղերի եւ արտադրութիւնների նկատմամբ ընտրողական հովանաւորչութիւնը ստեղծում է «խաղի» անհաւասար պայմաններ, ծնում է քաղաքական շահերի կոնֆլիկտ եւ կոռուպցիա:

Ակտիւ արդիւնաբերական քաղաքականության դէպքում, ընդհակառակը, ա) շուկան ի զօրու է հարթել սոսկ փոքր կառուցուածքային շեղումները, մինչդեռ, աւելի արմատական եւ խորքային անհամամասնութիւնների վերացումը պահանջում է պետության կողմից ակտիւ միջամտութիւն, ասենք, էներգետիկայի կամ բնական մենաշնորհ հանդիսացող միւս ոլորտների խնդիրների լուծման պարագայում, բ) շուկայական սուբյեկտների կողմից ընդունուող որոշումները կողմնորոշուած են արագ շահույթ բերող կարճաժամկէտ ծրագրերին, մինչդեռ, այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հիմնարար գիտական հետազօտութիւնները կամ ենթակառուցուածքների զարգացումը, նրանց շահերի տիրոյթից դուրս են, գ) տնտեսության նոր ճիւղերը եւ արտադրութիւնները կարող են յայտնուել անմրցունակ տիրոյթում անբարենպաստ ելակէտային պայմանների պատճառով, դ) քաղաքական համակարգի ամրութիւնը կարող է բաւարար չլինել շուկայական ինքնակարգաւորման մեխանիզմները լիարժէք կիրառելու դէպքում: Այս պայմաններում անհրաժեշտութիւն է առաջանում օգտագործել ազդեցության ոչ շուկայական մեխանիզմներ, ասենք՝ ուղղակի կամ անուղղակի սուբսիդաւորման տարրեր:

Այս երկու՝ տրամագծօրէն հակադիր մօտեցումները, թերեւս, հաւասարապէս ծայրայեղ են: Միջազգային փորձը վկայում է, որ դրանց միակողմանի կիրառության դէպքում ցանկալի արդիւնքները չեն ստացւում: Այս կամ այն երկիրը իր զարգացման որոշակի փուլերում, որպէս կանոն, կիրառում է արդիւնաբերական քաղաքականության տարրերի այս կամ այն կոմբինացիան:

Ակնյայտ է, որ Հայաստանի պարագայում անհրաժեշտ են արդիւնաբերական քաղաքականության աւելի ճկուն մօտեցումներ: Մեր պայմաններում առաւել նախընտրելի կարող է լինել արդիւնաբերական քաղաքականության առանձին տարրերի զուգակցումը հետեւողական ինստիտուցիոնալ բարեփոխումների եւ օտարերկրեայ ներդրումների ներգրաւման աւանդական մեխանիզմների հետ: Ակնյայտ է նաեւ, որ արտահանման խրախուսմանը միտուած տնտեսական քաղաքականութիւնը մեզանում երկարաժամկէտ հեռանկարում կարող է աւելի ծանրակշիռ արդիւնքներ տալ, քան դէպի ներքին շուկայի պաշտպանությանը միտուած քայլերը: Այստեղ վերստին չպէտք է ծայրայեղութիւնների մէջ ընկնել. գլխաւորը այդ քաղաքականության «ոսկէ միջինը» գտնելն է:

Աղքատությունը անարդար բաշխման արդիւնք է

Անկախության ընթացքում մեր հասարակության աղքատացումը եւ սոցիալական բեւեռացումը փորձագէտները բնական են համարում: Տրամաբանութիւնն այսպիսին է. երբ դրւում են պետականության կառուցման, բանակաշինության, շուկայի ձեւաւորման, դեմոկրատական ինստիտուտների ստեղծման նպատակներ, պետության խնդիրները գերակայ են դառնում շարքային քաղաքացու խնդիրների հանդէպ, ինչի հետեւանքով աղքատութիւնն աճում է:

Երբ անցումային շրջանի հիմնական քաղաքական խնդիրները լուծուած են, շարքային քաղաքացու խնդիրը վերստին առաջին պլան է մղւում:

Որքանո՞վ է այս շարժը մեզանում իրական ու տեսանելի: Թերեւս, մեզանում յարաճուն աղքատության խնդիրը առաջին հերթին ներքին ծագում ունի. Հայաստանում առկայ է ոչ այնքան հարստության բացակայության, որքան նրա անարդար ու անհամաչափ բաշխման խնդիրը. տնտեսութիւնը զարգանում է, նոյնիսկ երկնիշ թուերով աճ է գրանցում, սակայն դրա պտուղները քաղում են փոքրաթիւ նորահարուստները: Թոյլ ու անզօր պետութիւնն էլ, մի կերպ ծայրը ծայրին հասցնելու ու աղքատին փշրանքներ նետելու համար, ինքն է ձեռքը պարզած օգնութիւն հայցում դրսի նուիրատուներից: Իսկ փողը հէնց այնպէս չեն տալիս. պէտք է լաւ ծրագրեր գրել ու դոնորներին համոզել, որ դրանց իրագործմամբ աղքատութիւնը կը կրճատուի: Մեր պաշտօնեաներն էլ մեզ հաւատացնում են, թէ ինչքան շատ դոլար մտնի երկիր ու դրամը կայուն լինի, այնքան աւելի նուազ կը լինի մարդկանց, այդ թւում եւ աղքատների, ասենք՝ նպաստառուների, եկամուտների արժեզրկման հաւանականութիւնը, ու աղքատութիւնը կը նուազի: Դա, իհարկէ, տեսականօրէն այդպէս է, սակայն մեր իրականության փաստերը բոլորովին այլ բան են ասում: 1994 թուականից ի վեր Արժոյթի միջազգային հիմնադրամը երկրի գլխաւոր դրամատանը 200 միլիոն դոլարից աւելի, այսպէս ասած՝ «կայունացման» վարկեր է փոխանցել, մինչդեռ աղքատութիւնը դրանից ամենեւին չի նուազել. ընդհակառակը մի բան էլ խորացել է: Սակայն արտաքին ֆինանսական ստնտուները միամիտ չեն. պահանջում են նուազեցնել չինովնիկների կաշառակերութիւնը, դրա համար էլ յանձնաժողովներ են կազմւում, հակակոռուպցիոն ծրագրեր են գրւում, որոնք, որպէս կանոն, մնում են թղթի վրայ:

Այդուհանդերձ, վերջին տարիներին աղքատութիւնը որոշ չափով նահանջել է, ինչը չես ասի կոռուպցիայի մասին: Ըստ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագէտների դիտարկումների եթէ շատ աղքատ ընտանիքների բաժինը հայաստանեան ընտանիքների ընդհանուր թւում 1998 թուականին 28 տոկոս էր, ապա 2001 թուականի վերջին արդէն իջել է 23 տոկոսի: Դրա հետ մէկտեղ, ծայրայեղ աղքատ կամ ընչազուրկ ընտանիքները 1997-98 թուականներին կազմել են ընտանիքների ընդհանուր թուի 11-ից 12 տոկոսը, մինչդեռ այժմ դրանց բաժինը ընտանիքների ընդհանուր թուի մէջ չի անցնում 6-7 տոկոսից: Բացի բազմանդամ ընտանիքներից, ծայրայեղ աղքատների խմբի մէջ են նաեւ միայնակ ծերերը, որոնք, սակայն, աւելի մեծ չափով են օգտւում աղքատության նպաստների համակարգից, քան բազմանդամ ընտանիքները: Հաւանաբար, նաեւ այս դիտարկման արդիւնքներն հաշուի առնելով է, որ որոշում ընդունուեց կրճատել պետական բիւջէից աղքատության նպաստներին արուող յատկացումները, բացի դրանից, մօտ 15 հազար ընտանիք դուրս բերուեցին պետական այդ աջակցութիւնը ստացող ընտանիքների ցուցակից:

ՄԱԿ-ի երեւանեան գրասենեակի զարգացման ծրագրի փորձագիտական խումբը փորձել է ուսումնասիրութեամբ բացայայտել աղքատության, կրթության եւ տնտեսական ակտիւության կապերը, պարզել, թէ այդ երեւոյթներից իւրաքանչիւրը ինչպէ՞ս է ազդում միւսների վրայ, ասենք, ինչքանո՞վ է մարդու կրթուածութիւնը թոյլ տալիս յաղթահարել աղքատությունը, կամ ինչքանո՞վ է մարդու տնտեսական ակտիւությունը նրա համար պատշաճ եկամուտներ ստեղծում: Ըստ կատարուած ուսումնասիրության, վերջին 2-3 տարիներին Հայաստանում աղքատության սրությունը նուազել է, համեմատաբար պակասել է սոցիալապէս ծայրայեղ խոցելի խմբերի բաժինը ընդհանուրի մէջ:

Ինչեւէ. եթէ ծայրայեղ աղքատների պահպանման հոգսը հէնց իր պետության, ասել է թէ հասարակության հոգսն է, ապա նոյնը չես ասի աղքատների աւելի բազմաթիւ բանակի, եթէ կարելի է ասել՝ «չափաւոր» աղքատների մասին: ՄԱԿ-ի չափանիշներով ծայրայեղ աղքատ են համարւում այն ընտանիքները, որոնց օրական եկամուտը շնչի հաշուով չի անցնում 1 դոլարից, իսկ աղքատ են նրանք, որոնց օրական եկամուտը պակաս է 2 դոլարից: Հայաստանում չափաւոր աղքատ ընտանիքների թիւը մօտաւորապէս նոյն կարգի է, ինչ շատ աղքատ ընտանիքներինը: Ընտանիքների այս խմբի հիմնական խնդիրը, թերեւս, աւելի շուտ կրթական է. մարդկանց գիտելիքները եւ հմտութիւնները հնացել են, ու այս առումով իրավիճակին յարմարուելու խնդիր կայ:

Ըստ ՄԱԿ-ի փորձագէտների դիտարկումների հանրապետության ընտանիքների 30-ից 35 տոկոսը կազմում է, այսպէս կոչուած, «միջին խաւը», որի քանակը կրկնակի պակաս է խորհրդային շրջանի միջին խաւերը ներկայացնող ընտանիքների թուից: Միջին խաւերը, ըստ փորձագէտների, յաջողակ փոքր ու միջին գործարարներն են, միջազգային կազմակերպութիւններում, ֆինանսաբանկային կառոյցներում աշխատողները.

Ինչ վերաբերում է փոքրաթիւ նորահարուստների խաւին, ապա նրանք դեռեւս աւելի շուտ մտածում են կապիտալի կուտակման մասին եւ մտահոգուած չեն աղքատության կրճատման խնդրով թէկուզ գոնէ յանուն սեփական բիզնեսի շահերի: Սակայն սա էլ լաւ օրից չէ. գործարարը ստիպուած է կաշառք տալ, քան թէ հովանաւորել կրթութիւնը:

Շ. ՄԻՆԱՍԵԱՆ

Տօն՝ դպրարկ ձեռքերով

Անցած տարուայ դեկտեմբերին կառավարութիւնը որոշեց, որ այդուհետ իւրաքանչիւր տարուայ յունիսի երրորդ կիրակին կը նշուի որպէս բուժաշխատողի օր: Խորհրդային Միութիւնում բժշկի օրը տօնուել է, սակայն Հայաստանի անկախացումից յետոյ այն նշուելու է առաջին անգամ՝ յունիսի 16-ին: Առողջապահութեան նախարար Արարատ Մկրտչեանը, շնորհաւորելով բուժաշխատողներին, շուրջ 250 պատուոգիր է յանձնել հանրապետութեան վաստակաշատ բժիշկներին: Տօնական հանդիսութիւնների շռայլութիւն, սակայն, այս համակարգը ներկայ վիճակում իրեն չի կարող թոյլ տալ: Եւ բնական է, այլապէս գրեթէ իւրաքանչիւր բուժաշխատող արդարացիօրէն կը նկատի. «Դրամ ունէք՝ աշխատավարձ տուէք»:

Նաիրա ՊՕՂՈՍՅԱՆ

Չենք կարող ասել, թէ պետութիւնը առանձնակի խանդավառութեամբ կը նշի բուժաշխատողի օրը, քանի որ զլանում է անգամ ժամանակին վճարել նրանց՝ առանց այն էլ ոչ բարձր աշխատավարձը:

- Առողջապահական համակարգին պետբիւջէով այս տարի 13 մլրդ դրամ է յատկացուել: Ֆինանսական ընդհանուր իրավիճակի մասին տեղեկութիւններ չյաջողուեց ստանալ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարութիւնից, քանի որ նրանց տեղեկատուութեան բաժնում ոչ մի կերպ չեն կարողանում լրագրողի եւ որեւէ վարչութեան պատասխանատուի հետ հանդիպում կազմակերպել. փոխարէնը անվերջօրէն գրութիւններ են պահանջում: Առողջապահութեան նախարարի հասարակայնութեան եւ մամուլի հետ կապերի գծով խորհրդական Ռուսլաննա Գեւորգեանից տեղեկացանք, որ ֆիննախարարութիւնը անցած ամսավերջին շուրջ 800 մլն դրամ է յատկացրել, որից 500 միլիոնը՝ պոլիկլինիկաների եւ շտապօգնութեան հիւանդանոցների աշխատակիցների աշխատավարձերի համար, 300 միլիոնը՝ այլ ծախսերի:

Այսուհանդերձ, չենք կարող ասել, թէ պետութիւնը առանձնակի խանդավառութեամբ կը նշի բուժաշխատողի օրը, քանի որ զլանում է անգամ ժամանակին վճարել նրանց՝ առանց այն էլ ոչ բարձր աշխատավարձը: Դրա վառ ապացոյցն է թիւ 14 պոլիկլինիկայի թերապեւտիկ ծառայութեան բուժաշխատողների՝ երկու օր առաջ կրկին վերսկսած անժամկէտ գործադուլը, որի պատճառը 15 ամիս չվարձատրուելն է: Նրանք արդէն չորրորդ նամակն են յղում հանրապետութեան նախագահին՝ խնդրելով, որ այն չհասցէագրուի Երեւանի քաղաքապետարանի առողջապահութեան վարչութեանը, գործակալութեանը կամ նախարարութեանը, այլ անձամբ պաշտօնապէս պատասխանի: Կառավարութեան հանդէպ իրենց յոյսն ու հաւատը վերջնականապէս կորցրած թերապեւտները, վերադաս ատեանների տուած բազմաթիւ խոստումներից եւ ոչ մէկը իրականացուած չտեսնելով, նախագահից պահանջում են պարզել աշխատավարձերը չստանալու իրական պատճառները, բուժաշխատողների ամսավճարները պոլիկլինիկա փոխանցել յատուկ յօդուածով, իսկ հոսանքի աստղաբաշխական վճարումները կատարել միայն վճարովի ծառայութիւնների եկամուտների հաշուին, պատասխանատուութեան ենթարկել մեղաւորներին, սառեցնել «Առողջապահութեան գործակալութիւն» կոչուող միանգամայն աւելորդ, կոռուպցիոն հիմնարկութեան գործունէութիւնը՝ մինչեւ ապահովագրական բժշկութեան ներդրումը:

Ի դէպ՝ գործակալութեան մասին. համապատասխան ղեկավարները պնդում են, որ բժշկական գործակալութիւններ այսօր գործում են բոլոր առաջատար զարգացած երկրներում: Նրանք, հերթական անգամ զբաղուելով աւելորդ, անօգուտ ու կոռուպցիոն կառոյցներ ստեղծելով, անտեսում են, որ նախ՝ իրենց նշած երկրներում գոնէ այդաստիճան չեն ոտնահարւում ինչպէս այլոց, այնպէս էլ բժիշկների իրաւունքները, մարդիկ տարիներով առանց աշխատավարձի չեն մնում, յետոյ էլ՝ մեր երկրի վիճակի հետ բնաւ կապ չունեն «առաջատար» եւ «զարգացած» բնութագրումները:

Աղքատ պետութեան եւ աղքատ հասարակութեան մէջ գործող որոշ բժիշկներ, հարկ է փաստել, որ խախտում են իրենց տուած Հիպոկրատի երդումը՝ անմարդկային ու կոպիտ վերաբերուելով հիւանդին, ինչը սոցիալական ոչ մի պատճառաբանութեամբ չի կարող արդարացուել: Սրան զուգահեռ՝ անհրաժեշտ է նաեւ նշել, որ շատերն էլ խիստ բարձր պատասխանատուութեամբ ու մարդկայնօրէն են կատարում իրենց գործը: Նոյնիսկ այս դժուարին պայմաններում բժշկագիտութիւնը Հայաստանում առաջընթաց է ապրում, կատարւում են գիտահետազօտական աշխատանքներ, ուսումնասիրւում են վիրաբուժական նոր մեթոդներ: Մենք երկրաշարժ ենք տեսել, անցել պատերազմի թոհուբոհով, եւ հայ բժիշկները այս ընդհանուր բարձիթողի վիճակում էլ հարիւրաւոր կեանքեր են փրկում:

Շնորհաւորում ենք բուժաշխատողներին իրենց տօնի առթիւ եւ մաղթում, որ բոլոր հնարաւորութիւններն ունենան մարդկային կեանքեր փրկելու իրենց վեհ գործում:

ԱՅՅ

Աշխարհը՝ երեխաներին

Մայիսի 8-10-ը Նիւ Եորքում կայացած ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլէայի երեխաների հարցերին նուիրուած յատուկ նստաշրջանի մասին օրերս սոցապնախարարութիւնում լրագրողների հետ իրենց տպաւորութիւնները կիսեցին հայաստանեան պատուիրակութեան անդամները, որը ղեկավարել է սոցապնախարար Ռազմիկ Մարտիրոսեանը: ԿԳ փոխնախարար Աիդա Թոփուզեանը, սոցապփոխնախարար Արայիկ Պետրոսեանը, առողջապահութեան նախարարութեան մօր եւ մանկան առողջութեան պահպանման վարչութեան պետ Կարինէ Սարիբէկեանը եւ «Յոյսի կամուրջ» ՀԿ նախագահ Սուսաննա Թադեւոսեանը յայտնեցին, որ քննարկուել են երեխաների կրթութեան որակի բարձրացման, առողջութեան պահպանման եւ այլ բազմաբնոյթ խնդիրներ, ընդունուել է «Աշխարհ՝ երեխաների կեանքի համար պատշաճ պայմաններով» փաստաթուղթ: Մասնակիցները նշեցին, որ վերջին ժամանակներում մեր երկրում գործնական ծրագրեր են իրականացուում մանկական հարցերի լուծման ուղղութեամբ: Ըստ նրանց՝ այսօրուայ առողջ երեխան վաղուայ առողջ հասարակութեան գրաւականն է: ՄԱԿ-ի նստաշրջանում մշակուել է երեխաների հիմնախնդիրների մասին գործունէութեան առաջիկայ 10 տարուայ ծրագիր:

Ն. Պ.

Նօթ

«Երկիրի» թիւ 20-ի 7-րդ էջի «Իսկ գիւղացին վճարել է» նիւթում զետեղուած լուսանկարը եղել է «Հայեացք Երեւանից» ամսագրից:

Երեք տարին բաւարար չէ

Գեղարքունիքի Ներքին Գետաշէն գիւղը (Մարտունու շրջան) բնակչութեան խտութեամբ երկրորդն է մարզում: 10 հազար բնակիչ ունի, 5000 ընտրող: Այստեղից մեկնում են արտագնայ աշխատանքի, բայց չեն արտագաղթում, իսկ ծնունդների թիւն աւելի մեծ է, քան շրջկենտրոնում:

Ներքին Գետաշէնը շուրջ 170 տարուայ պատմութիւն ունի: Այն հիմնել են Արեւմտեան Հայաստանից գաղթած ալաշկերտցիները: Գիւղացիները հիմնականում զբաղուում են հողագործութեամբ, անասնապահութեամբ եւ պնդում, որ իրենք աշխատասէր ժողովուրդ են, իսկ, սոցիալական ընդհանուր ծանր կացութեամբ հանդերձ, գիւղին կապուած մնալը բացատրում են ոռոգման եւ խմելու ջրի առկայութեամբ: Նրանց վկայութեամբ ջրի խնդիր ունեցել են խորհրդային տարիներից սկսած, իսկ այսօր նման հարց չկայ, որովհետեւ այն իր անձնական միջոցներով լուծել է գիւղապետ Գագիկ Գրիգորեանը՝ գիւղամիջով հոսող Արգիճ գետից ինքնահոս ջուր բերելով: Ջուրը տեղ է հասնում նաեւ արտեզեան ջրհորներով: Խմելու ջուր ունենալու համար մօտ 20 կմ ջրագիծ է անցկացուել, որն աւարտին հասցնելու համար ընդամէնը 1 կմ է մնացել:

Կիրակի օրը՝ յունիսի 16-ին, Ներքին Գետաշէնում կրկին գիւղապետի ընտրութիւններ են: Ներկայացուել է երեք թեկնածու՝ ներկայ գիւղապետ, մասնագիտութեամբ իրաւաբան, անկուսակցական Գագիկ Գրիգորեանը, գիւղապետի տեղակալ, Հանրապետական կուսակցութեան անդամ Արթուր Յովհաննիսեանը եւ նոյնպէս անկուսակցական, մանկավարժ Կարէն Գեւորգեանը:

Գիւղացիների հետ զրուցելիս պարզուեց, որ բնակչութեան մեծամասնութեան համակրանքը ներկայ գիւղապետի կողմն է: «Իր նուիրուածութեամբ Գագիկ Գրիգորեանը գերազանցում է բոլորին: Նա պահանջկոտ ղեկավար է, եւ մենք չհիասթափուեցինք նրան ապաւինելով»-, ասում է թիւ 1 դպրոցի տնօրէն Վազգէն Գեւորգեանը:

Գիւղացիներն անգնահատելի նուէր են համարում ջուրը, շուրջ ութ անգամ ոռոգում են հողերը: Ինչպէս նշեց գիւղատնտես Մերուժան Գալստեանը արդարացի կերպով, վիճակահանութեամբ հողյատկացում է կատարուել: Պահուստային հողերից աճող ընտանիքներին տնամերձեր են բաժանուել. 109 հա հողից 800 ընտանիքի՝ 47 հա անհատոյց եւ 62 հեկտար՝ աճուրդով:

Ներքին Գետաշէնի բժշկական ամբուլատորիայի տնօրէն, ընտանեկան բժիշկ Աշոտ Անտոնեանը պատմեց, թէ ինչպէս է գիւղապետը իրենց նախկին խարխլուած, վատթարագոյն պայմաններով շէնքի փոխարէն լաւ պայմաններով տարածք յատկացրել: Պարոն Անտոնեանը յայտնեց նաեւ, որ գիւղը մանկաբոյժի, թերապեւտի եւ ատամնաբոյժի կարիք ունի, իսկ բնակչութեան հիւանդացութիւնը կապուած է եղանակի, մագնիսական դաշտի կտրուկ փոփոխութիւնների հետ, վերջերս աւելացել է էնդոկրին հիւանդութիւնների թիւը:

Համայնքի անդամ, Մարտունու պետական քոլէջի աշխատակից Մարատ Պօղոսեանը ներկայ գիւղապետին իր վստահութեան քուէն տալը հիմնաւորեց նրա կատարած գործերով. «Ես հաշուի եմ առնում նրա գործունէութիւնը, աշխատանքային անցեալը: Ծանր պայմաններում նա միշտ էլ սատարել է ժողովրդին, ապացուցել իր նուիրուածութիւնը բարեգործութեամբ, եւ համոզուած եմ, որ յետագայում էլ այդպէս կը շարունակի»:

Ինքը Գագիկ Գրիգորեանը, կարծում է, որ երեք տարին քիչ է գիւղապետին մեծ ծրագիր իրագործելու համար: Վերընտրուելու դէպքում նրա անելիքները կը լինեն եւս մի ջրամբարի կառուցումը, որպէսզի ջուրը լիարժէքօրէն բաւարարի գիւղացուն, գիւղամիջեան փողոցների ասֆալտապատումը, բնակչութեանը գազամատակարարմամբ ապահովելը: Թերեւս, միայն աշխատատեղեր ստեղծելու հարցին է Գ. Գրիգորեանը մօտենում վերապահօրէն բացատրելով, որ, ելնելով իրավիճակից, թերեւս միայն բիզնես ծրագրերով է հնարաւոր դա իրագործել:

Թէ ո՞վ կ՚ընտրուի գիւղապետ պարզ կը լինի կիրակի օրը: Ամէն դէպքում, ուրախալին այն է, որ Ներքին Գետաշէնը Հայաստանի այն հազուագիւտ գիւղերից է, ուր ջրի խնդիր չկայ, եւ որտեղ գիւղապետը հնարաւորինս հոգում է գիւղի կարիքները:

Ն. ՊՕՂՈՍԵԱՆ

Շարունակում են կիսապ թողա՞ծը

Եթէ 1999 թուականի հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան նպատակը իշխանափոխութիւնն էր, ապա, յիրաւի, «Հոկտեմբերի 27»-ը ցայսօր շարունակում է արմատական ընդդիմութիւն կոչուածի որոշ ներկայացուցիչների ակտիւ մասնակցութեամբ:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

Քրէական գործի նիւթերի համաձայն, 1999 թուականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանեանը մտադիր էր ոչ միայն սպանել երկրի վարչապետին, այլ նաեւ պաշտօնանկ անել նախագահ Ռոբերտ Քոչարեանին: Ու անգամ այդ նպատակի համար պատրաստել էր որոշման նախագիծ՝ վերջինիս մեղսագրելով այնպիսի արարքներ, որոնք այսօր հալած իւղի տեղ ընդունած՝ թմբկահարում են ընդդիմադիր կոչուող պատգամաւորները: Ասել է թէ՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար, արմատական ընդդիմութիւնը շարունակում է Նաիրի Հունանեանի կիսատ թողած «գործը», քանզի նրանք, իբրեւ Ռ. Քոչարեանի պաշտօնանկութեան հիմնաւորում, մատնանշում են ինչպէս Ն. Հունանեանի որոշման նախագծում տեղ գտած, այսպէս կոչուած, փաստերը, այնպէս էլ այն յայտարարութիւնները, որոնցով սոյն յանցագործը ցայսօր փորձում է արդարացնել բնութեան օրէնքների դէմ գործած իր ոճիրը: Աւելին, ոմանք չեն խորշում անգամ Ն. Հունանեանի ձախողուած քայլերը կրկնելուց. եթէ 1999 թուականի հոկտեմբերի 27-ին, խորհրդարանում սպանդը կատարելուց յետոյ, չհասնելով երկրի նախագահի հրաժարականին՝ Նաիրի Հունանեանը փորձեց բաղձալի նպատակը կեանքի կոչել՝ նախաքննութեան ընթացքում տարաբնոյթ զրպարտչական ցուցմունքներ տալով երկրի նախագահի եւ նրա մերձաւոր շրջապատի դէմ, որոնք անհիմն որակուեցին եւ հերքուեցին հէնց նախաքննութեան փուլում, ապա այսօր նոյնպիսի ցուցմունքներ դատարանում տալիս են պատգամաւորներից ոմանք՝ զուգահեռաբար ձախողելով երկրի օրէնսդիր մարմնի աշխատանքը: Այսինքն՝ փորձում են անգործութեան դատապարտել իշխանութեան միանգամից երկու թեւերը՝ օրէնսդիրը եւ գործադիրը:

Բացառուած չէ նաեւ, որ որոշ պատգամաւորներ կանխամտածուած են այսօրինակ գործողութիւնների դիմում՝ երկրի վիճակը ապակայունացնելու, բնականոն զարգացումը խաթարելու համար, քանզի կան ուժեր՝ ներսում եւ արտերկրում, որոնց Հայաստանի զարգացումը ձեռնտու չէ...

Օրինակ՝ Արամայիս Բարսեղեանը, որը, ըստ էութեան ծանօթ չլինելով ՀՀ Սահմանադրութեանը եւ ԱԺ կանոնակարգին, թիւր պատկերացում ունի պատգամաւորի գործունէութեան մասին՝ կարծելով, թէ պատգամաւորի խնդիրը ոչ թէ երկրի բնականոն զարգացումը ապահովող օրէնսդրական դաշտի ձեւաւորումն է եւ իր իսկ ընդունած օրէնքների համար պատասխանատու լինելը, այլ սեփական ձախողումների եւ չիմացութեան մէջ երկրի նախագահին ու քաղաքական միւս կուսակցութիւններին մեղադրելը, ամբիոններ գրաւելը, քրէական գործի դատաքննութեան ժամանակ զրպարտչական ցուցմունքներ տալը: Օրերս սոյն պատգամաւորը դատարանում, ոչ աւել, ոչ պակաս, յայտարարեց, թէ՝ «Հոկտեմբերի 27»-ի կազմակերպիչները նախագահական պալատից էին», ու, հետեւելով Վիկտոր Դալլաքեանի օրինակին՝ հրաժարուեց որեւէ հիմնաւորում կամ փաստարկ ներկայացնել: Սա կարող է ունենալ երկու բացատրութիւն՝ կամ ունի եւ չի ներկայացնում, կամ էլ զրպարտում է նախագահական պալատում աշխատողներին: Համաձայնէք, որ երկու դէպքում էլ գործ ունենք քրէօրէն յետապնդելի արարքի հետ, բայց եթէ յանկարծ ինչ-որ մէկը փորձի բացատրել յարգարժան պատգամաւորին, ապա դա անմիջապէս կ՝որակուի իբրեւ քաղաքական հետապնդում կամ խօսքի ազատութեան սահմանափակում:

Այսօրինակ վարքագիծ դատարանում դրսեւորեց նաեւ կոմունիստ Գագիկ Թադեւոսեանը, որին կարծես թէ վերապահուած էր Դաշնակցութեան վրայ կասկածի շղարշ նետելու դերը, եւ նա իր «խորաթափանց» դիտարկման արդիւնքում յայտարարեց, թէ կասկածների տեղիք է տալիս այն, որ ԱԺ 1999 թուականի հոկտեմբերի 27-ի նիստին մասնակցում էին ՀՅԴ-ն ներկայացնող ընդամէնը երկու պատգամաւոր՝ պատմական էքսկուրս կատարելով, թէ Դաշնակցութիւնը հակուած է ահաբեկչական գործողութիւնների: Այն, որ կոմունիստ պատգամաւորը քաղաքական գործունէութիւն ծաւալելու համար կարող է դիմել թուրքական աղբիւրների օգնութեանը՝ նորութիւն չէ, թէեւ անընդունելի, բայց, անկեղծ ասած, անսպասելի էր, որ նա այնքան էլ ծանօթ չէ այն կուսակցութեան պատմութեանը, որին ներկայացնում է խորհրդարանում: Քանզի համոզուած ենք, որ այդ դէպքում իրեն թոյլ չէր տայ յայտարարել, թէ կոմունիստները երբեւէ ահաբեկչական գործողութիւններ կատարելու յաւակնութիւններ չեն ունեցել. պատմութիւնը վկայում է, որ ոչ միայն ունեցել են, այլեւ այդօրինակ գործողութիւններ են կատարել սեփական ժողովրդի դէմ՝ իշխանութեան ղեկը պահելու համար:

Բայց բացառուած չէ նաեւ միւս տարբերակը, որ, ասենք, թէ՝ Արամայիս Բարսեղեանն է գիտակցում իր արարքի անօրինական լինելը, թէ՝ Գագիկ Թադեւոսեանը՝ իր գործողութիւնների անբարոյականութիւնը, ու իրենց համախոհների հետ ձեռք ձեռքի տուած՝ կանխամտածուած են այսօրինակ գործողութիւնների դիմում՝ երկրի վիճակը ապակայունացնելու, բնականոն զարգացումը խաթարելու համար, քանզի կան ուժեր՝ ներսում եւ արտերկրում, որոնց Հայաստանի զարգացումը ձեռնտու չէ՝ ճիշտ այնպէս, ինչպէս ձեռնտու չէր «Հոկտեմբերի 27»-ի ահաբեկչական խմբին կամ նրանց կազմակերպիչներին, եթէ այդպիսիք կան: Հետեւապէս՝ կա՛մ այս ամէնը միեւնոյն խմբի յանցաւոր մտքի արգասիքն է, որոնք Ն. Հունանեանի ձախողումից յետոյ Հայաստանի զարգացումը փորձում են ձախողել այլ անձանց միջոցով, կամ էլ՝ ոմանց մտաւոր ունակութիւնը կամ իշխանութեան հասնելու մոլուցքը թոյլ չի տալիս հասկանալ, որ իրենց գործունէութեամբ ջուր են լցնում «Հոկտեմբերի 27»-ն իրականացրած խմբի ջրաղացին:

Ջինդատախազը շարունակում է խոչընդոտել

«Հոկտեմբերի 27»-ի գործով նախկին մեղադրեալների խցերում կատարուած գաղտնալսումները առ այսօր չեն տրամադրուել Յարութիւն Յարութիւնեանի եւ Նաիրի Բաղալեանի նկատմամբ կատարուած բռնութիւնների փաստերի առթիւ նախաքննութիւն իրականացնող ՀՀ դատախազութեան քննչական խմբին: Մինչդեռ, յիշեցնենք, քննչական խումբը դեռեւս ապրիլ ամսին էր գրաւոր խնդրել ԱԱՆ մեկուսարանին՝ տրամադրել դատարանի որոշմամբ կատարուած այդ ձայնագրութիւնները:

Խցերում կատարուած գաղտնալսումները այսպիսի խորհրդաւորութեամբ պարուրելը եւ դրանք զինդատախազութեան տրամադրած կիսատ-պռատ սղագրութիւնների հետ համեմատելու հնարաւորութիւնից ՀՀ դատախազութեան քննչական խմբին զրկելը արժանահաւատութիւն են հաղորդում շրջանառուող այն տեսակէտներին, որ սղագրութիւնները ամբողջական չեն, եւ որ այդ գաղտնալսումները կարող են լոյս սփռել «Հոկտեմբերի 27»-ի գործով իրականացուած նախաքննութեան մեթոդների վրայ, ինչը ձեռնտու չէ զինդատախազութեանը, յատկապէս զինդատախազ Գագիկ Ջհանգիրեանին եւ որոշ քննիչների, որոնք կեանքի են կոչել իջեցուած հրահանգներն ու պատուէրները: Եւ հէնց նրանք այսօր ջանքեր չեն խնայում՝ ՀՀ դատախազի մարտի 4-ի որոշմամբ յարուցուած քրէական գործի քննութեանը խոչընդոտելու համար:

Ի դէպ, առանձնապէս մեծ գաղտնիութեամբ են պահւում յատկապէս Նաիրի Բաղալեանի խցում կատարուած գաղտնալսումները, եւ անգամ դրանց սղագրութիւնները՝ թէկուզեւ կիսատ-պռատ, չեն տրամադրուել ՀՀ դատախազութեանը: Այստեղից կարելի է հետեւութիւն անել, որ շատ աւելի ծանր փորձութիւնների միջով է անցել յատկապէս Նաիրի Բաղալեանը, ինչն արտացոլուած է նաեւ գաղտնալսումներում...

Ինչեւէ, դէպքերի նման զարգացումը, կարծում ենք, կանխատեսելի էր, եթէ «Հոկտեմբերի 27»-ի գործով իրականացուած նախաքննութեան մթնոլորտն ու մեթոդները հնարաւոր չի լինի պարզել, քանի դեռ Գագիկ Ջհանգիրեանը շարունակում է պաշտօնավարել, եւ քանի դեռ անջատուած մասով շարունակում է նախաքննութիւն իրականացնել զինդատախազութիւնը:

Ս. Տ.

Մեղաւորը ոչ թէ աւտոտեսուչներն են, այլ նրանց ղեկավարնե՞րը

Ներքին գործերի նախարարութիւնը գործում է իր մշակած խաղի կանոնների շրջանակներում եւ օրէնքներին հետեւում է ըստ նպատակայարմարութեան: Աւելին, չի խորշում անգամ այս մասին բարձրաձայնելուց:

Վարորդներից շատերը, դատելով նրանց ահազանգերից, այնքան էլ լաւ պատկերացում չունեն տրանսպորտային միջոցների պետական տեխնիկական զննում անցկացնելու կարգի, տրանսպորտային միջոցների գրանցման եւ վերագրանցման սկզբունքների, վարորդական վկայականների, տեխնիկական անձնագրերի եւ պետհամարանիշերի փոփոխման կարգի մասին: Սա այնքան էլ չի մտահոգում ներքին գործերի նախարարութեանը, որը, թւում է թէ, պէտք է շահագրգռուած լինէր վարորդների իրազեկութեամբ, քանզի դա է երթեւեկութեան անցանկալի խախտումներից խուսափելու միակ միջոցը: Դատեցէք ինքներդ. ի պատասխան վերոնշեալ կարգերը վարորդներին իրազեկելու մասին աւտովարորդների իրաւունքների պաշտպանութեան «Աքիլլէս» միութեան ՆԳ նախարարին ուղղուած դիմումի՝ փոխնախարար Արարատ Մահտեսեանը գրաւոր յայտնել է. «... Ինչ վերաբերում է տրանսպորտային միջոցների վերաբերեալ տեղեկութիւններ յայտնելուն, ապա նախարարութիւնը նման տեղեկութիւններ տրամադրելը նպատակայարմար չի գտնում»: Ու անգամ նեղութիւն չի կրել մանրամասնելու, թէ ինչո՞ւ նպատակայարմար չի գտնում, եւ գործող օրէնսդրութեան ո՞ր կէտն է սահմանում, որ նշուած տեղեկութիւնները ՆԳՆ-ն կարող է տրամադրել ըստ նպատակայարմարութեան: Այս հարցի շուրջ պարզաբանումներ, ցաւօք, չյաջողուեց ստանալ նաեւ «Օրէնքն ու պետաւտոտեսութիւնը» թեմայով «Հակաստուեր» կազմակերպութեան հրաւիրած քննարկման ժամանակ, քանզի ՆԳՆ-ի եւ, մասնաւորապէս, պետաւտոտեսչութեան ղեկավարութիւնը հարկ չէր համարել դրան ներկայանալ:

Այդպիսով, հնարաւոր չեղաւ ճշտել նաեւ պետաւտոտեսչութեան ղեկավարութեան դիրքորոշումը «Աքիլլէս» կազմակերպութեան նախագահի հնչեցրած այն յայտարարութեան վերաբերեալ, որ անգամ աւտոտեսուչները չգիտեն իրենց գործառոյթները, եւ թէ որ դէպքերում

իրենք իրաւունք ունեն վարորդներից վերցնել նրանց վարորդական վկայականը կամ ինչ իրաւունքով են պահանջում աւտոմեքենայ վարելու լիազօրագրի նօտարական վաւերացում, երբ, ըստ նօտարիատի վարչութեան պետ Մ. Գաբոյեանի, դա ամենեւին պարտադիր չէ: Իսկ փոխարէնը չեն հետեւում, որ վարորդները, գործող կարգի համաձայն, երեք ամիսը մէկ անգամ անցնեն բուժզննում: Իսկ որ այս կարգը համատարած խախտւում է վկայում է առողջապահութեան նախարարութեան «Աքիլլէս» կազմակերպութեանը տրամադրած տեղեկատուութիւնը այն մասին, որ վերջին 3 տարիներին բժշկական հետազօտման ենթարկուել է ընդամէնը 20 հազար վարորդ, մինչդեռ, ըստ պետաւտոտեսչութեան տուեալների, գրանցուած աւտոմեքենաների թիւն անցնում է 220 հազարից:

«Տպաւորութիւնն այն է, որ այսօրինակ վիճակը ինչ-որ մարդկանց ձեռնտու է», - ասաց «Աքիլլէս» կազմակերպութեան նախագահ Էդ. Յովհաննիսեանը՝ կարծիք յայտնելով, որ աւտոտեսուչների կողմից վարորդների նկատմամբ կամայական վերաբերմունքի դրսեւորման պատճառը ղեկավարութեան սխալ հրահանգաւորումն է: Քանզի համոզուած է, որ մեզանում ոչ թէ օրէնքներն են անկատար, այլ պարզապէս դրանց հետեւող չկայ: Իսկ որպէսզի օրէնքներին չհետեւելը շահաւէտ չլինի, Էդ. Յովհաննիսեանն առաջարկեց օրէնքով նուազեցնել հերթապահ խախտումների համար նախատեսուած տուգանքի չափը եւ 2-4 հազար դրամի փոխարէն սահմանել 1000 դրամ: Այս դէպքում, պրն Յովհաննիսեանի կարծիքով, վարորդների մեծամասնութիւնը կը գերադասի տուգանքը տեսուչի գրպանը մտցնելու փոխարէն մուծել պետբիւջէ եւ տեսուչներից պահանջել քաղաքակիրթ վերաբերմունք, ինչի մասին այսօր դեռ կարող ենք միայն երազել:

Ս. Տ.

Հայ գրողների առաջին մեծ հաւաքը

Յունիսի 8-ին առաջին անգամ Հայաստանի գրողների միութեան նախագահությունը եւ Արցախի գրողների միությունը ԼՂՀ մայրաքաղաքում անցկացրեցին համատեղ նիստ՝ «Գրականությունը եւ մեր իրականությունը» օրակարգային մէկ հարցով:

Յովհաննէս ԵՐԱՆԵԱՆ

Ըստ Հայաստանի գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանի, նիստն անցել է խիստ գործնական հարթութեան վրայ: Խզուել է գրող-ընթերցող կապը, չնայած որ գրքեր, այսպէս թէ այնպէս, տպագրւում են: Այսօր տպագրուող գրքի միջին տպաքանակը 500-1000 է, որը, հասկանալի է, չնչին բան է: Սակայն նոյնիսկ այս փոքր տպաքանակը շատ յաճախ մնում է գրախանութներում: Նոյն ճակատագրին է արժանանում նաեւ որեւէ գրքի գրախօսականը, կամ գրականագիտական աշխատութիւնը, որը տպագրւում է գրական մամուլում կամ մի այլ տեղ:

Լեւոն Անանեանը ասում է, որ այսօր հայ գրականութիւն կարդում է մեր ժողովրդի 5-8 տոկոսը միայն: Նոյն վիճակն է նաեւ Ղարաբաղում, սակայն նիստը նախատեսուել էր Արցախի մայրաքաղաքում, որովհետեւ մեր գրողները մեծ պարտք ունեն ազատագրական հերոսամարտի առաջ: «Գրականությունը եւ իրականությունը» թեմայի շրջանակներում էր նաեւ հարցը, թէ ինչքան ենք այսօր մենք՝ գրողներս, վարձահատոյց եղել մեր պատմութեան մէջ մի շատ մեծ երեւոյթի, որ կոչւում է արցախեան պատերազմ»,- ասում է Լեւոն Անանեանը:

Նիստում քննարկուել է նաեւ Արցախի շնորհաշատ գրողներով Հայաստանի գրողների միութեան կազմը համալրելու հարցը: Նոյն խնդիրներն է քննելու նաեւ յունիսի 16-ին Երեւանում բացուելիք գրողների համահայկական խորհրդաժողովը, որին մասնակցելու են 17 երկրների աւելի քան 60 ներկայացուցիչներ: Սա մի բացառիկ երեւոյթ է, որովհետեւ առաջին անգամ է, որ բազմաթիւ երկրներից հայ գրողները կը հաւաքուեն հայրենիքում՝ քննելու մեր մշակոյթի եւ գրականութեան հարցերը: Խնդիր է դրուած բոլոր այդ երկրներում ունենալ Հայաստանի գրողների միութեան ներկայացուցչութիւններ, որպէսզի իրենց երկրներում քաղաքացիական գործուն դերակատարութիւն ունեցող հայ գրողները կարողանան սերտացնել կապերը միմեանց ու հայրենիքի միջեւ եւ կարողանան առաւելագոյնս օգտակար գործ կատարել հայրենիքի ու հայ գրականութեան համար: Լեւոն Անանեանը նշում է, որ համաժողովի ընթացքում կը ստեղծուի հայ գրականութեան սատարման եւ տարածման հիմնադրամ: «Հայ գրողը չպիտի մնայ մուրացիկի վիճակում,- ասում է գրողների միութեան նախագահը,- պիտի լինի մի հիմնադրամ, որը կ՚օգնի հայ գրողին՝ որտեղ էլ որ նա ապրելիս եւ ստեղծագործելիս լինի»:

Երեւանում անցկացուելիք գիտաժողովը կը տեւի 5 օր: Հայաստանի գրողների միութիւնը բացառել է գիտաժողովի ժամանակ միայն մէկ հարցի քննարկում՝ ուղղագրութեան հարցը, որը կարող է այնքան ջուր վերցնել, որ համատեղուելու փոխարէն, վէճերի ու պառակտման պատճառ կը դառնայ: Սակայն Լեւոն Անանեանը վստահեցնում է, որ հաշուի կ՚առնուեն բոլոր պատուիրակների տեսակէտները: ՀՀ ԱԺ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի մշտական յանձնաժողովը կը բաժանի հարցաթերթիկներ, որով մասնակիցները իրենց վերաբերմունքը կ՚արտայայտեն ուղղագրութեան փոփոխութեան մասին: Գրողներն իրենց առաջարկներն ու հիմնաւորումները կը փոխանցեն ստեղծուելիք մասնագիտական յանձնաժողովին: Ինչ որ է, յունիսի 16-21-ին Երեւանում կը հաւաքուեն հայ գրողներն աշխարհի տարբեր ծագերից եւ, առանց ուղղագրութեան փոփոխութեան շուրջ վէճերի էլ, համաժողովը կը լինի բուռն եւ հետաքրքիր:

«Սասունցի Դաւիթի» առաջին մասը պատրաստ է

Ընթացքի մէջ են «Սասունցի Դաւիթ» էպոսի մօտիւներով նկարահանուող համանուն մուլտֆիլմի աշխատանքները: Ինչպէս տեղեկացնում է «Արմէնպրեսը», «Հայֆիլմ» կինոստուդիայում արդէն աւարտուել են ռեժիսոր Արման Մանարեանի ֆիլմի առաջին մասի նկարահանումները:

Ըստ կինոստուդիայի փոխտնօրէն Մանուէլ Ալեքսանեանի՝ մուլտֆիլմն ունենալու է 9 մաս 1,5 ժամ ընդհանուր տեւողութեամբ: Նա նշեց, որ նախատեսուած է իւրաքանչիւր տարի 1 մաս նկարահանել, միաժամանակ աւելացրեց, որ այդ ընթացքով այն շատ ուշ կ՚ամբողջանայ:

Մ. Ալեքսանեանի խօսքերով, լրացուցիչ ֆինանսական աջակցութեան դէպքում հնարաւոր կը լինէր ամէն տարի գոնէ 2 մաս նկարահանել:

ԿԱՊԵՐ

Գրքերի նոր խմբաքանակ Արցախին



Յունիսի 8-ին Հայաստանի ազգային գրադարանը գրքերի հերթական խմբաքանակը յանձնեց ԼՂ-ի Մաշտոցի անուան հանրապետական գրադարանին: 2000 թուից մինչ այսօր նուիրուած գրքերի թիւը հասնում է 2500-ի: Ազգային գրադարանը այս իմաստով նպատակային ծրագիր է իրականացնում՝ գրքերով ապահովելով ոչ միայն Արցախի կենտրոնական գրադարանին, այլեւ նոր գրադարաններ ստեղծելով հեռաւոր գիւղերում, ինչպիսին է, օրինակ, Քաշաթաղի Մարաթուկ գիւղը:

- Երկու հանրապետութիւնների մշակոյթի նախարարութիւնների համագործակցութեան ընդհանուր կոնտեքստում մեր գրադարանը ապահովում է Արցախը այն բոլոր գրքերով, որ հրատարակւում են ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ Սփիւռքում,- ասում է Ազգային գրադարանի տնօրէն Դաւիթ Սարգսեանը: Ըստ Դաւիթ Սարգսեանի, այդպիսով լրացւում է տեղեկատուական ու ճանաչողական այն բացը, որն առաջացել էր Ղարաբաղում՝ Ադրբեջանի իշխանութիւնների ճնշման հետեւանքով: Այս անգամ ՀՀ ազգային գրադարանը ԼՂ-ի Մաշտոցի անուան գրադարանին յանձնեց 250 անուն գիրք այն լաւագոյնը, որ հրատարակուել է վերջին տարիներին գեղարուեստական դասական ու ժամանակակից, գիտական, մատենագիտական եւ այլ բնոյթի գրականութիւն:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ակամայ պատասխան

(Նամակ խմբագրութեանը)

Չէի ցանկանայ բանավիճային մարզանքների մէջ մտնել արձակագիր Ռ. Յովսէփեանի հետ նրա «Երկիր» N 19-ում հրապարակուած «Բումերանգի» առթիւ, որն արձագանք էր «Գարունի» այս տարուայ N 1-ում լոյս տեսած «Այրուող այգեստանները» Գուրգէն Մահարու նամակներում» հրապարակման:

Չէի ցանկանայ մի քանի նկատառումներով:

Նախ՝ պատասխանելու բան չկայ: Իր բարձրացրած հարցերի շարանին մասամբ պատասխանում է ինքը Ռ. Յովսէփեանը: «Բումերանգն» արձակուած է նիւթի հետ չառնչուող ծխածածկոյթում: Եւ վերջապէս, առկայ է խօսքը գրական հենքից քաղաքական հարթութիւն փոխադրելու միտումը...

Չէի էլ պատասխանի, եթէ այնտեղ խօսքը չգնար «Այրուող այգեստանների» մասին՝ վէպի «նորայայտ հեղինակի նկրտումների» կապակցութեամբ: Ովքեր չեն կարդացել Ռ. Յովսէփեանի արձագանքը՝ ասեմ, որ այդ ծանր մեղքում մեղադրւում եմ ես:

Ինչն է հիմք ծառայել նման արտառոց մեղադրանքի: Չգիտեմ: Ես պարզապէս հրապարակել եմ մեր եւ Սփիւռքի մի շարք գրողներին ուղղուած Գուրգէն Մահարու նամակները, որոնցում բացայայտւում է «Այրուող այգեստանների» ստեղծման, հրապարակման եւ դրա շուրջը բարձրացած ամբոխավարական, հմտօրէն ղեկավարուած աղմուկի պատմութիւնը, որը ծանր նստեց գրողի վրայ: Մի գուցէ այն, որ հրապարակման մէջ նշել եմ, թէ հեղինակային բնագիրը գտնւում է իմ ձեռքի տա՞կ: Փարատելու համար Ռ. Յովսէփեանի «մտահոգութիւնը» միանգամից ասեմ, որ ես պատրաստ եմ այդ «նկրտումը» զիջել ցանկացած իրաւաբանական կամ ֆիզիկական անձի, որը ձեռնամուխ կը լինի վէպի հրատարակմանը: Խօսքը 850 էջանոց մի թղթապանակի մասին է, որտեղ Մահարու ձեռքով կատարուած նշումները, անգամ մեծ ցանկութեան դէպքում, անհնար է շփոթել մէկ այլ ձեռքի հետ:

Գրել եմ տարբեր առիթներով, կրկնում եմ եւս մէկ անգամ «Այրուող այգեստանները» սովետահայ հարուստ գրականութեան ամենանշանակալից ստեղծագործութիւնը, ենթարկուել է խմբագրական այնպիսի միջամտութիւնների, որոնք հիմք են տալիս թիւր ենթադրութեան, թէ հեղինակը փոխել է իր գաղափարախօսութիւնը: Մերկապարանոց չլինելու համար Ռ. Յովսէփեանի եւ ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում գրեթէ չորս տասնամեակի վաղեմութիւն ունեցող պաշտօնական զեկուցագրի վրայ՝ ուղղուած «Լոյս» հրատարակչութեան տնօրէն Հ. Կարճիկեանին եւ ստորագրուած խմբագիր Լենա Սեղբոսեանի կողմից:

«Ուղարկում եմ Գ. Մահարու «Այրուող այգեստանները»: Բնագիրը լրիւ նայել եմ, սակայն ներքոյիշեալ էջերում վերատպութեան հետեւանքով կան անպարզութիւններ...»:

Հեշտ է տեսնել, որ դիտողութիւնները վերաբերել են վէպի առաջին հրատարակութեան էջերից աւելի քան մէկ երրորդին: Երկրորդ հրատարակութեան համեմատութիւնը հեղինակային բնագրի հետ աւելի է խորացնում պատկերը՝ խմբագրական վիրահատութեան է ենթարկուել վէպի գրեթէ իւրաքանչիւր երկրորդ էջը: Հանուել են ամբողջ էջեր, պատկերներ:

Եւ եթէ քեզ, սիրելի Ռուբէն Յովսէփեան, նեղ թուայ վէպի նկատմամբ պատմութեան առջեւ հեղինակային նկրտումներ արդէն դրսեւորած վերոյիշեալ ազգանունների ցանկը, ես կարող եմ աւելացնել եւս երկուսը հրատարակչութեան գեղարուեստական բաժնի նախկին վարիչ Ստ. Թօփչեանը եւ խմբագրութեան կոյր ու հաւատարիմ գործիք, «խմբագիր» Ա. Քիշոյեանը:

Իմ նկրտումների նպատակը արդարութեան եւ ճշմարտութեան վերականգնումն է, եւ թող հեռու լինեն արձակագիր Ռուբէն Յովսէփեանից նման «հրապարակումները»:

Սահմանափակուենք այսքանով:

Գրիգոր ԱՃԵՄԵԱՆ

Խմբագրութիւնը առանց միջամտութեան տպագրում է պրն Գրիգոր Աճեմեանի արձագանքը, միաժամանակ հարկ է համարում անել մի շարք մատնանշումներ: Հակառակ այն բանին, որ Գ. Աճեմեանը ներկայացնում է Ռուբէն Յովսէփեանի յօդուածը իբրեւ «խօսքը գրական հենքից քաղաքական հարթութիւն փոխադրելու» միտումով գրուած, հարկ չի համարում, աւելի ճիշտ չի ցանկանում վերյիշել, որ «Գարուն» ամսագրում իր գրական յօդուածի հիմնական ամփոփման մէջ ինքն է խնդիրը քաղաքականացրել, աւելի ճիշտ նախկին յուշերով կուսակցականացրել: «Բանը» ի՞նչ է այսօր: «Բանը» նորից քաղաքական է... Չեմ կասկածում, որ տասը տարի առաջ գրողը երկու ձեռքով կողմ կը լինէր «Այրուող այգեստանների» հրապարակմանը, բայց այսօր կուսակցական եւ քաղաքական գործիչը խոչընդոտում է դրան...

Քնել է արուեստագէտի խիղճը, եւ չկայ մէկը, որ ասի զարթնիր, լաւ, մոնիմ քըզի... փոխարէնը զգօն է կուսակցական համազգեստի պատուի ջատագովը»:

Ցաւալի է, որ պրն Գ. Աճեմեանը Ռ. Յովսէփեանի դէմ «Գարուն»-ում եւ այս նիւթում նետեր է արձակում առանց իսկ մէկ բառ ճշտելու նրա հետ այն մեղադրանքի շուրջ, որը հետեւողական շարունակում է իբրեւ իր խօսքերի հիմնաւորում բերելով Շաւարշ Քոչարեանի խօսքը, թէ Ռ. Յովսէփեանը յանձնաժողովի նիստում դէմ է խօսել վէպի վերահրատարակմանը եւ տապալել այն, թէեւ մեզ հետ զրոյցում Շաւարշ Քոչարեանը ժխտեց, թէ այդպիսի տեղեկութիւն է տուել պրն Գ. Աճեմեանին: Միաժամանակ պրն Քոչարեանը յայտնեց, որ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի մշտական յանձնաժողովի վերջին նիստում որոշուել է միջնորդութիւն ներկայացնել ՀՀ վարչապետին Մահարու երկի վերահրատարակման առաջարկութեամբ:

Կրկին ցաւով արձանագրում ենք, որ շատերի մէջ արմատացած հակադաշնակցական, հակակուսակցական մտայնութիւնը դեռեւս յանգեցնում է նման տխուր ու ցաւալի երեւոյթների:

«Երկիր»

Լեզուաբանական «լարախաղացութիւնը» շարունակւում է

Բուհերի ընդունելութեան քննութիւններին շատ քիչ ժամանակ է մնացել, ու, դպրելով այսօրուայ իրավիճակից՝ առնուազն «Հայոց լեզուի» քննութեանը դարձեալ դաժան «ճակատամարտ» է սպասւում: Դիմորդների ու լեզուաբան մասնագէտների շրջանում լուրջ մտահոգութիւնների տեղիք է տալիս այն հանգամանքը, որ, չնայած բազմիցս հնչած բողոքներին, այս տարուայ, այսպէս կոչուած, բարեփոխուած «Շտեմարանից» էլ չյաջողուեց հանել կամ գոնէ նուազագոյնի հասցնել չարաբաստիկ «զուգաձեւութիւնները»: Իսկ փորձը ցոյց է տալիս, որ չնայած ԿԳ նախարարների յայտարարութիւններին, թէ զուգաձեւութիւնները գնահատւում են յօգուտ դիմորդի, քննական յանձնաժողովներն այդ հարցում, որպէս կանոն, կամայական մօտեցում են ցուցաբերում:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏԵԱՆ

«Հայոց լեզուի» քննութեանը չարաշահումներից խուսափելու համար թերեւս ինքը՝ ԿԳ նախարարը, պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնի «զուգաձեւութիւնների» խնդրին եւ խիստ պահանջ դնի առարկայական յանձնաժողովների նախագահների առջեւ, որպէսզի վերջիններս տեստերը կազմելիս խուսափեն դրանցից:

Մասնաւորապէս, նախորդ տարի լուրջ բողոքների տեղիք տուեցին համասեռ եւ տարասեռ որոշիչների կէտադրմանն առնչուող դէպքերը, երբ տեստերում տեղ էին գտել օրինակներ, որոնցում դժուար է հստակօրէն սահմանազատել՝ գոյականի տուեալ լրացումը համասե՞ռ է, թէ՞ տարասեռ: Նոյնիսկ մամուլում հրապարակում եղաւ կոնկրէտ այն օրինակով, երբ «Դա մի փոքրիկ ճմռթած պառաւ էր» նախադասութեան մէջ «փոքրիկ, ճմռթած» որոշիչների տրոհումը նոյն յանձնաժողովը մի դէպքում սխալ էր համարել, մի դէպքում՝ ճիշտ: Կամ այս խնդրի հանդէպ յանձնաժողովներից մէկը մի դիրքորոշում էր որդեգրել, միւսը՝ այլ, չնայած որ «Շտեմարանի» վերջում գնահատմանը վերաբերող յատուկ ցուցումներում էլ արձանագրուած էր, որ համասեռ որոշիչներից իմաստով յստակօրէն չսահմանազատուող տարասեռ որոշիչները ստորակէտով թէ՝ տրոհելը, թէ՝ չտրոհելը պէտք է ճիշտ համարել: Ի թիւս այլոց՝ սոյն օրինակը, ինչպէսեւ ցուցումը, տեղ է գտել նաեւ 2002-ի «Շտեմարանում», ու դժուար է ասել, թէ այս տարուայ յանձնաժողովներն ի՞նչ մօտեցում կցուցաբերէն:

2.6 առաջադրանքում դիմորդից պահանջւում է տրուած ածանցով եւ բառերից ընտրուած համապատասխան արմատներով կազմել 6 բառ՝ առանց երկրորդ ածանցի: Դեռ մի կողմ թողնենք այն փաստը, որ շատ դէպքերում 6-ի փոխարէն հնարաւոր է լինում կազմել միայն 5 (կէտ 39), երբեմն նաեւ՝ 7 (կէտ 40), նոյնիսկ 8-9 բառ, բերենք «Շտեմարանում» տեղ գտած բառակազմական այնպիսի առաջադրանքներ, որոնք, մեղմ ասած, հասու չեն հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի շրջանաւարտի մակարդակին: Մասնաւորապէս, միւսյն Հր. Աճառեանի բառարանն ուսումնասիրելով՝ դիմորդը կարող է պարզել, որ «անդամալոյծ» բառի «լոյծ» արմատն ունի երկու տարբեր իմաստներ՝ «քարշ» եւ «լուծել» ենթիմաստներով, հետեւաբար, օրինակ, այդ արմատից «լծկան» բառ կազմել չի կարելի: Կամ դարձեալ բացառապէս Աճառեանի օգնութեամբ դիմորդը կարող է իմանալ, որ «ձայնամեկուսացում» բառի «մէկ» արմատը ծագել է նախնական «մի», «մէն» տարբերակից, հետեւաբար այս արմատով եւ «ութիւն» ածանցով կարող է կազմել «մենութիւն» բառը: Նոյն 2.6 առաջադրանքում մի դէպքում «ընտանիք» բառից պէտք է ընտրել «տուն» արմատը, մէկ այլ դէպքում՝ «ընկեր» բառը ամբողջովին դիտել որպէս արմատ, թէեւ երկու բառում էլ ունենք «ընդ» բաղադրիչը: Նոյն կերպ «սիրուն» բառում «ուն»-ը չի դիտւում որպէս ածանց:

Ի դէպ, այս առաջադրանքները մի իսկական գլուխկոտրուկ են դարձել անգամ գիտական բարձր կոչում ու աստիճան ունեցող լեզուաբանների համար, իսկ ընդամէնը մէկ ամիս յետոյ դրանք առաջադրուելու են դպրոցի շրջանաւարտներին, որոնք բառակազմութիւն անցել են 4-րդ դասարանում՝ համապատասխան մակարդակով:

4.2.3-ում շփոթութեան եւ թիւրիմացութեան տեղիք տուող առաջադրանքներ կան՝ կապուած բայի սեռի հետ: Օրինակ, մի դէպքում «մեկնել» բառը պէտք է համարուի ներգործական սեռի բայ, միւս դէպքում՝ չէզոք:

Մէկ այլ՝ 5.7.1 առաջադրանքում պահանջւում է փակագծերում տրուած բառերից ընտրել ճիշտը եւ տեղադրել նախադասութեան մէջ: Այս շարքի 15-րդ կէտում, որպէս տարբերակներ, ընտրութեան համար, փակագծում տրուած են «կազմակերպական» եւ «կազմակերպչական» բառերը: Որպէս ճիշտ տարբերակ սրանցից ո՞րը պէտք է ընտրի դիմորդը, եթէ իրականում երկու ձեւերն էլ համարժէք են: Այդ է փաստում Էդ. Աղայեանի «Արդի հայերէնի բացատրական բառարանը», ինչպէս նաեւ ԳԱԱ լեզուի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարանը»: Սրանցում սոյն երկու բառերը տրուած են որպէս նոյնական, ոճական գործածութեան առումով համարժէք բառեր, եւ մի բառը բացատրելիս յղում է կատարւում երկրորդին:

Այսպիսով, չնայած կատարուած բարեփոխումներին, «Շտեմարանում» նման «զուգաձեւութիւնների» թիւը, ցաւօք, չի նուազել, ինչն այսօր արդէն դժուար է պատահականութիւն համարել: Իսկ նման իւրաքանչիւր դէպք դիմորդից շատ յաճախ խլում է նրա համար ճակատագրական այն տասնորդական միաւորը, որը նա իրականում կարող է իր գիտելիքով վաստակել, եթէ նրա առջեւ արհեստական խոչընդոտներ չդրուեն: Իսկ խոչընդոտները, ինչպէս յայտնի է, այլազան չարաշահումների տեղիք են տալիս: Ուստի նման խնդիրներից խուսափելու համար թերեւս ինքը՝ ԿԳ նախարարը, պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնի այս խնդրին եւ խիստ պահանջ դնի առարկայական յանձնաժողովների նախագահների առջեւ, որպէսզի վերջիններս տեստերը կազմելիս խուսափեն նման «զուգաձեւութիւններից»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Մեր երիտասարդները՝ միջազգային ասպարէզում

Երիտասարդական ակումբների եւրոպական համադաշնութեան գլխաւոր ասամբլէայի նիստում, որը մայիսի 31-ից յունիսի 4-ը տեղի է ունեցել Կիպրոսում, քննարկուել է համադաշնութեանը երկու նոր պետութիւնների Հայաստանի եւ Ալբանիայի երիտասարդական կազմակերպութիւնների անդամակցութեան հարցը: Ի տարբերութիւն Ալբանիայի կազմակերպութեան, որի անդամակցութիւնը մերժուել է, մեր երկիրը ներկայացնող «Երիտասարդական ակումբների դաշնութիւն» կազմակերպութիւնը միաձայն քուեարկութեամբ դարձել է այս հեղինակաւոր կառոյցի անդամ:

Երիտասարդական ակումբների եւրոպական համադաշնութիւնը, որը հիմնադրուել է 1975 թուականին, այսօր Եւրոպայում գործող ամենահզօր երիտասարդական կազմակերպութիւններից մէկն է, որի կազմում է, օրինակ, 18 հազար անդամ ունեցող ակումբներ համախմբող Մեծ Բրիտանիայի կազմակերպութիւնը:

Իսկ մեր երկիրն այս կառոյցում ներկայացնող «Երիտասարդական ակումբների դաշնութիւն» կազմակերպութիւնը հիմնադրուել է 1999-ին եւ միաւորում է հանրապետութեան տարբեր մարզերում գործող աւելի քան 30 երիտասարդական ակումբներ:

Յանուն խաղաղութեան

ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամի եւ Համահայկական երիտասարդական հիմնադրամի նախաձեռնութեամբ յունիսի 22-23-ին Երեւանում Կորիւն եւ Տէրեան փողոցների յատման անկիւնում տեղի կ'ունենայ «Գրաֆիտի-Կանայք յանուն խաղաղութեան» մշակութային միջոցառում-ակցիան: Միջոցառման նպատակը Հայաստանում եւ տարածաշրջանում խաղաղութեան եւ մարդասիրութեան գաղափարների քարոզումն է, մշակութային բուհերի տաղանդաշատ ուսանողներին, գրաֆիտիով զբաղուող խմբերին ինքնադրսեւորման հնարաւորութիւն տալը: Միջոցառմանը մասնակցող մշակութային եւ միւս բուհերի շուրջ 100 ուսանողները «Խաղաղութիւն» թեմայի շրջանակներում կը նկարազարդեն յիշեալ խաչմէրուկում գտնուող կիսակառոյցը շրջապատող պարիսպը: Ի դէպ, երիտասարդներն իրենց նկարները նախապէս կը ներկայացնեն երիտասարդական հիմնադրամ, որն էլ քաղաքապետարանի համապատասխան բաժնի մասնագէտների հետ կ'որոշի, թէ ո՞ր էսքիզն է համապատասխանում քաղաքի տեսքին: Լաւագոյն նկարները կ'արժանանան մրցանակների:

Նախատեսւում է, որ յետագայում նման միջոցառում կը կազմակերպուի նաեւ Հայաստանի միւս քաղաքներում:

Սեփ. լր.

Կը սկսուի ատեստաւորման «մրցավազքը»

Նախորդ համարում արդէն տեղեկացրել էինք, որ յունիսի 17-ից սկսւում են ոչ պետական բուհերի 2002 թուականի շրջանաւարտների ամփոփիչ ատեստաւորման քննութիւնները: Այս քննութիւններում եւս անհրաժեշտ 60 % առաջադիմութիւն ցուցաբերելու դէպքում, ատեստաւորման առաջին տարում բարձր առաջադիմութիւն ցուցաբերած ոչ պետական բուհերի համապատասխան մասնագիտութիւնները կը ստանան պետական հաւատարմագիր:

Քննութիւնների անցկացման նպատակով ԿԳ նախարար Լեւոն Մկրտչեանի հրամանով, փոխնախարար Ա. Աւետիսեանի գլխաւորութեամբ, կազմուել է կենտրոնական յանձնաժողով, որի կազմում ընդգրկուած են ոչ պետական բոլոր բուհերի ռեկտորները: Այս յանձնաժողովի որոշմամբ արդէն սահմանուել է, որ տուեալ բուհի ուսանողներն իրենց բուհում քննութիւն չպէտք է յանձնեն: Ըստ այսմ, յստակեցուել են նաեւ քննութիւնների անցկացման վայրերը: Մասնագիտական առանձին խմբերով դրանք կազմակերպուելու են 6 բուհում: Երեւանի տնտեսաիրաւագիտական ինստիտուտում կ'անցկացուեն բժշկական եւ մանկավարժական, «Հր. Աճառեան» համալսարանում՝ իրաւագիտական, «Հայբուսակ» ինստիտուտում՝ լեզուագիտական եւ լրագրութեան, Լ. Քալաշեանի անուան հայկական բաց համալսարանում՝ արդիւնաբերական, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում՝ հիմնականում տնտեսագիտական, կառավարման եւ ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանում՝ տեղեկատուական համակարգերի մասնագիտական քննութիւնները: Ընդհանուր առմամբ, քննական այս գործընթացին մասնակցելու է 22 ոչ պետական բուհ՝ 21 մասնագիտութեան գծով:

Յանձնաժողովի օրերս կայացած հերթական նիստում քննարկման առարկայ դարձաւ նաեւ քիչ թուով 3-8 շրջանաւարտ ունեցող բուհերի հարցը: Փոխնախարար Ա. Աւետիսեանն այս առումով մտահոգութիւն յայտնեց, որ բուհերը գուցէեւ մտածուած են պետական քննութեան ներկայացրել քիչ թուով շրջանաւարտների՝ առաջադիմութեան 60%-ը հեշտ յաղթահարելու համար: Ուստի դեռ պէտք է ստուգել ու պարզել սեպտեմբերին կամ առաջին կիսամեակից յետոյ որքա՞ն է եղել այդ բուհերի շրջանաւարտների թիւը: Ինչեւէ, յանձնաժողովի որոշմամբ, 7 եւ պակաս շրջանաւարտ ունեցող բուհերը համապատասխան մասնագիտութիւնների գծով ատեստաւորման չեն երաշխաւորուի, քանի որ այդքան քիչ թուով շրջանաւարտների քննութեան արդիւնքներով տուեալ բուհի ուսուցման որակի մասին օբյեկտիւ կարծիք կազմել չի կարելի:

Ի դէպ, կենտրոնական յանձնաժողովի նիստում փոխնախարար Ա. Աւետիսեանը բուհերի ռեկտորներին յատուկ զգուշացրեց, որ ընդունելութեան մասին գովազդային յայտարարութիւններում իրականութեանը չհամապատասխանող, փաստաթղթերով չամրագրուած «տեղեկատուութեան» տարածման դէպքում դատական կարգով կ'ենթարկուեն պատասխանատուութեան: Այս խնդրին «Երկիրը» վերջերս անդրադարձել էր, եւ, յուրախութիւն բոլորիս, արձանագրենք, որ համապատասխան մարմինները, ի վերջոյ, հարցն անհրաժեշտ ուշադրութեան են արժանացնում:

Լ. ԳԱԼՍՏԵԱՆ

Առա՛ջ, ընդդէմ նահանջի

1992 թ. յունիսի 14-ին Շահումեանի ինքնապաշտպանական ուժերի մարտական դիմադրութիւնն ու հերոսական կամքը այլեւս կեղի կուեցին հակառակորդի մեծաքանակ զրահապէխնիկային, որովհետեւ այդպէս էլ չժամանեց Հայաստանի իշխանութիւնների խոստացած ռազմական օգնութիւնը:

Գ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Հետախուզութիւնը նախապէս պարզել էր, որ նախօրէին ադրբեջանցիների աշխուժացումը թելադրուած է Շահումեանի վրայ բոլոր Էրքէջ, Մանաշիդ, Բուզլուխ, Ղարաչինար, Հայ Բորիս ուղղութիւններով եւ միաժամանակ պատրաստուող յարձակման նախապատրաստութիւններով: Յարձակումն սկսում է անսպասելիօրէն շուտ: Ինքնապաշտպանական ուժերի համար անակնկալ էր նաեւ, որ օմօնականներին միացել էր ռուսական դիվիզիան: 7-8 ժամ տեւած անհաւասար մարտից յետոյ ազատամարտիկները թողնում են դիրքերը:

Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու եւ ինքնապաշտպանութիւնը պատասխան գործողութիւններով հզօրացնելու փոխարէն, հայ ազատամարտիկներն ստիպուած էին ուշքի գալ անհաւանական մարտերից ու ցաւալի պարտութիւնից, կարողանալ ժամանակաւոր համարել Շահումեանի յանձնումը եւ կազմակերպել 10-15 հազար գաղթականութեան անվտանգ դուրսբերումը եւ Մռաւի լեռներով դէպի Մարտակերտի շրջան տեղափոխումը:

Շահումեանի կորուստը ծանր փորձութիւն էր ինքնապաշտպանական ուժերի համար: Մարտական ոգին պահելու, որոշ դէպքերում՝ նաեւ վերականգնելու համար վճռականութիւն էր պէտք, որովհետեւ պարտութիւնը նոյնքան անսպասելի էր, որքան եւ պետական այրերի դաւաճան անհեռատեսութիւնը:

Գործողութիւնները շատ արագ ծաւալուեցին, ռուս զինուորականներն ու օմօնականները այնպիսի լայն թափով էին գրաւում գիւղերը, որ ռազմական տեխնիկայի իսպառ բացակայութեան պայմաններում, ուղղակի անհնար էր դիմագրաւել հակառակորդի սպառազէն գրոհը:

Բացուել էին Արցախի հիւսիսային՝ ռազմավարական բացառիկ նշանակութեան պաշտպանական դարպասները:

Պոռշեանցի Կարօտը, որ յարձակումից առաջ մեկնել էր Շահումեանի ինքնապաշտպանական ուժերի կենտրոն՝ ջոկատների պաշտպանական օգնութիւնը կազմակերպելու համար, դէպքի վայր հասաւ, երբ արդէն բոլորը հասկանում էին, որ կատարուածն իրողութիւն է: Նահանջի դէպքերի զարգացումը չապրած Կարօտի վրայ Շահումեանի կորուստը վերահաս աղէտի ազդեցութիւն գործեց: Մարտականօրէն գրագէտ մարտիկը խորապէս ըմբռնում է, որ այս կորուստը ոչ միայն դժուարացնելու է ինքնապաշտպանութեան հետագայ կազմակերպումը, այլեւ ոչ կարճ ժամանակով Արցախից մեկուսացնում է չքնաղ այդ հողակտորը: Կարօտն իմացաւ նաեւ, որ նահանջի ճանապարհին մարտական ջոկատներից կտրուել եւ արդէն թշնամու կողմից գրաւուած սարալանջին անհետացել են իր համագիւղացի Պետօն (Պետրոս Ղեւոնդեանը) ու Վարդգէսը, ում հետ նա դեռեւս 1990 թ. գարնանը ստեղծել էր Պոռշեանի կամաւորական ջոկատը եւ ՀՅԴ դրօշի ներքոյ միացել Արցախեան ազատամարտին: Չկարողանալով հաշտուել կատարուածի հետ՝ Կարօտը որոշում է անձամբ ստուգել հակառակորդի դիրքերը՝ վստահ լինելով, որ այլընտրանք կայ, եւ կարելի է փորձել յետ գրաւել յենակէտը: Կարօտը ուսումնասիրում էր ռազմագիտութիւն, ունէր մարտական բնատուր տաղանդ: Նրան էր վստահուած մարզել նորաստեղծ ջոկատներին, սակայն իմացած բոլոր օրէնքների ու ռազմական տրամաբանութեան հետ չէր կարող հաշուի նստել: Ինչպէ՞ս թողնել թիզ առ թիզ ընկերների արիւնով ու ազատութեան տենչով օծուած սրբազան հողը:



Նրան միանում են նաեւ մի քանի այլ ընկերներ: Դա նրանց վերջին մարտն էր: Կարօտը դիմահար մխրճուեց թշնամու՝ հարիւրներ կազմող զօրքի մէջ՝ ոտքերի տակ զգալով հողը՝ հայրենի հողը: Այլեւս ոչ ոք չտեսաւ նրան: Կարօտի համեստ ու ուժեղ նկարագիրն ունեցող մարտիկը չէր կարող առանց մեղքի զգացումի կրել պարտութիւնը, երբ այդ պահին կարող էր ընկերների՝ Պետոյի, Վարդգէսի, Հրաչի եւ միւսների կողքին լինել եւ ուսը դէմ անել յարձակման թափին: Անյայտ ճակատագրով այս մարտիկը դարձաւ բողոք, յիշեցում, նպատակ, իրողութիւն. Շահումեանը թշնամու ձեռքին է...

Շահումեանի կորուստը ծանր փորձութիւն էր ինքնապաշտպանական ուժերի համար: Մարտական ոգին պահելու, որոշ դէպքերում՝ նաեւ վերականգնելու համար վճռականութիւն էր պէտք, որովհետեւ պարտութիւնը նոյնքան անսպասելի էր, որքան եւ պետական այրերի դաւաճան անհեռատեսութիւնը:

ՀԻՇՆԱԴՐԱՄ

Նոր տասնամեակի շեմին

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի յայտարարութիւնը ընդունուել է հոգաբարձուների խորհրդի 11-րդ նիստում՝ 2002 թ. մայիսի 25-ին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման օրուանից անցել է 10 տարի: Այսօր շնորհաւորելով յոբելեանի առիթով ուրախութեամբ փաստում ենք, որ տասնամեայ ժամանակահատուածում հիմնադրամը հսկայածաւալ աշխատանք է կատարել մեր հայրենիքի ու ժողովրդի համար:

Աւելի քան 75 միլիոն դոլար ընդհանուր արժէքով շուրջ 200 ծրագիր է իրականացուել, որոնք լուծել են Արցախի, աղէտի գօտու, Հայաստանի այլ շրջանների հրատապ խնդիրները բաւարարելով հարիւր հազարաւոր մարդկանց կենսական կարիքները:

Գնահատանքի եւ երախտագիտութեան արժանի շատ գործեր են արուել եւ այսօր էլ արւում են Սփիւռքի, Հայաստանի եւ Արցախի մեր ժողովրդի առատաձեռն նուիրատուութիւններով, մեր միասնական ու համախումբ ջանքով:

Հայաստանում եւ Արցախում այսօր էլ մեր գործուն մասնակցութեան կարիքն են զգում վերականգնման, նորացման ու զարգացման շատ ու շատ ծրագրեր, որոնք հայրենի պետութիւնը միայնակ ի զօրու չէ իրագործելու:

Ինչպէս նախորդ տասնամեակում, ապագայում էլ համահայկական հիմնադրամը կանգնելու է պետութեան ու ժողովրդի կողքին իրականացնելով համազգային նշանակութիւն եւ կարեւորութիւն ունեցող ծրագրեր:

«Հայաստան» համահայկական հիմնադրամն այս պարտաւորութիւնն իրենն է համարում, քանզի ընդգրկումով եւ առաքելութեամբ եզակի մի կառոյց է, որին մասնակից են Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնները, եկեղեցիների հոգեւոր պետերը, աւանդական երեք կուսակցութիւնները, ազգային-բարեսիրական կազմակերպութիւնները, անուանի անհատներ: Եւ այս համընդհանուր ներկայութեամբ են պայմանաւորուած հիմնադրամի ծրագրերի աշխարհագրութիւնը, բնոյթն ու ծաւալները:

Աղէտի գօտու վերականգնման, ենթակառուցուածքների նորացման ու զարգացման մշտական ծրագրերի շարքում հիմնադրամի այսօրուայ ամենաառաջնահերթ եւ խոշոր ծրագիրը Լեռնային Ղարաբաղի շրջաններն իրար միացնող «Հիւսիս-Հարաւ» աւտոմայրուղու շինարարութիւնն է: Ղարաբաղի տնտեսութեան ողնաշարը համարուող աւտոմայրուղու կառուցումն աւարտին հասցնելն անյետաձգելի անհրաժեշտութիւն է: Այս ծրագրի յաջող եւ արագ իրագործումից է կախուած Արցախի մեր հայրենակիցների սոցիալական եւ տնտեսական բազմաթիւ խնդիրների լուծումը, անհրաժեշտ կենսամակարդակի ապահովումը:

Մենք «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուներս, նոր տասնամեակի շեմին յոյսով եւ վստահութեամբ կոչ ենք անում հայ ժողովրդի զաւակներին, ազգային հաստատութիւններին ու կազմակերպութիւններին, նրանց կառոյցներին ու շրջանային մասնաճիւղերին, անվերապահ կերպով մասնակցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի մարդասիրական ծրագրերին, որոնք միտուած են մեր հայրենիքի վերականգնմանն ու զարգացմանը, նրա խաղաղ ու ապահով ապագային:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ

ԱՆԹԻԼԻԱՍ

Աւարտուեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային ընդհանուր ժողովը

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային ընդհանուր ժողովը, որն սկսուել էր յունիսի 6-ին, աւարտեց իր աշխատանքը: Ժողովի վերջին նիստերում, ինչպէս տեղեկացնում է Անթիլիասի մամլոյ դիւանը, քննարկուել են Սբ աթոռի առաջիկայ գործունէութեան առաջնահերթ խնդիրները, որոնք են հայեցի դաստիարակութեան ապահովում, հայ ժողովրդի իրաւունքների հետապնդում, Նուիրապետական աթոռների հետ գործակցութիւն, Հայաստան-Սփիւռք կապերի ամրապնդում: Ժողովը նաեւ քննարկել ու վաւերացրել է կաթողիկոսութեան Կանոնագրութեան մէջ առաջարկուած փոփոխութիւնները, ընդունել բանաձեւ:

Ապա տեղի է ունեցել կրօնական ու քաղաքական ժողովների ընտրութիւն: Կրօնական ժողովի անդամներ են ընտրուել Արտավազդ արք. Թրթռեանը, Կորիւն արք. Պապեանը, Սուրէն արք. Գաթարոյեանը, Եփրեմ արք. Թապագեանը, Զարեհ արք. Ազնաւուրեանը, Վարուժան եպս. Հերկելեանը, Խաժակ եպս. Յակոբեանը, Գեղամ եպս. Խաչերեանը, Նարեկ եպս. Ալէեմեզեանը, Գրիգոր վրդ. Չիֆթճեանը եւ Պարթեւ վրդ. Գիլումեանը: Քաղաքական ժողովի անդամներ են ընտրուել Անդրէ Թաբուրեանը, Ոսկեբերան Արզումանեանը, Երուանդ Փամբուքեանը, Երուանդ Մոնոֆարեանը, Յակոբ Աթէշեանը, Հրաչ Հաճեթեանը, Արա Դեմիրճեանը, Ցոլակ Թիւթելեանը, Խաժակ Տիքիջեանը, Անի Փամփանինին եւ Հարմիկ Դաւթեանը:

Կաթողիկոսութեան Ազգային ընդհանուր ժողովի փակման առթիւ իր օրհնութեան խօսքն է ասել Արամ Ա կաթողիկոսը: Նա բարձր է գնահատել հոգեւորական ու աշխարհական բոլոր պատգամաւորների գործուն մասնակցութիւնը ժողովին ու ծրագրերի մշակմանը, մասնաւորապէս, Հայաստանի պետութեան ու Նուիրապետական բոլոր աթոռների հետ ժողովի արտայայտած գործակցութեան ոգին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան գործունէութիւնը:

Գիտաժողով՝ նուիրուած Ցեղասպանութեանը

Մասաչուսեթսի ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբի եւ «Արմինիըն ռիւիւ»-ի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Հայոց ցեղասպանութիւնը եւ անկախութիւնը. հետեւանքներ եւ քաղաքականութիւններ» թեմայով զրոյցի երեկոյ, որի ընթացքում խօսուեց Հայոց ցեղասպանութեան, գաղթականութեան հիմնախնդրի, ստեղծուած պայմանների, հայկական Սփիւռքի ինքնաճանաչման, ամերիկեան քաղաքականութեան եւ այլնի մասին:

Դոկտոր Ռիչարդ Յովհաննիսեանը ներկայացրեց Հայաստանի առաջին հանրապետութեան վիճակը, ուր ապաստան գտան աւելի քան 300 հազար հայ գաղթականներ:

Մայամիի համալսարանից միջազգային յարաբերութիւնների մասնագէտ Խաչիկ Տեր-Ղուկասեանը նշեց, որ Հայոց ցեղասպանութիւնը 1923-91 թթ. Սփիւռքի համար ինքնաճանաչման, ինքնաներկայացման առանցք է եղել:

Նիւ Եորքի Սիթի համալսարանի ներկայացուցիչ Հրաչ Զադոյեանը ներկայացրեց Հայոց ցեղասպանութեան հանդէպ որդեգրուած ամերիկեան քաղաքականութիւնը եւ այդ քաղաքական դիրքորոշման մէջ պետական քարտուղարութեան ու քաղաքական շահերի դերակատարումը:

Սեփ. լր.

Պահպանութիւն եւ վարակազերծում

Շահագործումից՝ կառավարում

Երեւան քաղաքի ջրամատակարարման համակարգը ներառում է շուրջ 45 տեղային, փակ սանիտարական գօտիներ (ջրաղբիւրներ, I-ին եւ II-րդ աստիճանի պոմպակայաններ, օրուայ կարգաւորող ջրամբարներ, քլորատրման կայաններ եւ այլն): Դրանց պահպանութիւնը հիմնականում իրականացուում է ՆԳՆ ջրամատակարարման կառոյցների եւ պետական օբյեկտների պահպանութեան միլիցիայի գնդի կողմից, իսկ որոշ օբյեկտներ, զարմանալիօրէն, չեն էլ պահպանուում:

Վլադ ՔՈՉՈՒՆՑ

Պետք է ասել, որ իրականացուող պահպանութիւնը շատ հեռու է այն պահանջներից, որոնք յատուկ են այդ կարգի օբյեկտներին: Բաւական է նշել, որ բացառութեամբ այն տարիների, երբ հայ-ադրբեջանական յարաբերութիւնների լարուածութիւնը հասել էր գագաթնակէտին, ու պարտադրուած ապահովւում էր ուժեղացուած ռեժիմի պահպանութիւն, մնացած տարիներին այդ խիստ կարեւոր գործը արւում էր (է) առանց զինուած պահպանութեան, էլ չենք խօսում յուսալի եւ անխափան կապի բացակայութեան մասին:

Փակ լինելու համար այս գօտիները շատ բաց են (կիսաքանդ կամ քանդուած պարիսպներ, նորմաներին անհամապատասխան մետաղական ցանկապատեր, անբաւարար լուսաւորութիւն եւ այլն): Իսկ ամենավտանգաւորը պահպանութիւնն իրականացնող ոստիկանների անտարբերութիւնն ու թափթփուածութիւնն է (շաբաթ, կիրակի եւ յատկապէս տօնական օրերին որքան մարդ ասես՝ կերուխում են անում սանգոտու տարածքում):

Դէ, եթէ գօտին փակ չէ, ուրեմն աւելորդ է այն անուանել սանիտարական:

Մսի կոմբինատին յարակից համանուն ջրամբարի սանգոտին աւելի շատ նման էր շնաբուծարանի. շները՝ գազազած, «անխնամ» եւ «անլուայ», վխտում են տարածքում:

Քաղաքում առկայ են բազմաթիւ սահմանային բնորոշ դիտահորեր (առաւելապէս չափման համար), որոնցում ջրատարների կամ ջրագծերի վրայ բաց տեղեր կան: Եւ եթէ թշնամաբար տրամադրուած կամ մոլագար որեւէ մէկը ուզենայ, ապա շատ հեշտութեամբ կարող է ջրի մէջ թունաքիմիկատ ներարկել, արդիւնքում՝ հաշուած ժամերի ընթացքում հազարաւոր մարդիկ կը տուժեն: Մինչդեռ կարեւորելով խնդիրը, որոշ նիւթատեխնիկական միջոցներ ներդնելով՝ կարելի է ապահով հանգոյցներ կառուցել:

Քանի որ ջրընդունիչ կառոյցները, օրուայ կարգաւորող ջրամբարները հերմետիկ չեն (ծածկի, օդափոխութեան, ելք ու մուտքի խցերի մաշուածութիւն), երբեմն կրծողները, սողունները մուտք են գործում ջրաւազան:

Անչափ կարեւոր բաղկացուցիչ է խմելու ջրի եւ մաքրած կեղտաջրերի (Աէրացիայի կայան) վարակազերծումը:

Քանի որ Երեւան քաղաքի ջրամատակարարումը իրականացուում է հիմնականում գրաֆիկային ռեժիմով, եւ հետեւաբար մեծ է կոյուղաջրերի ներթափանցման վտանգը ջրագծեր, ուստի խմելու ջրի վարակազերծումն ու ջրակառոյցների ախտահանումը դառնում են գերխնդիր:

Բացառութեամբ Ապարանի ջրատարի, որի քլորացումը կատարւում է Աշտարակի խճուղում, մնացած ջրատարների քլորատրումը կատարւում է անմիջապէս ջրաղբիւրներում: Հարկ է նշել, որ այս գործընթացը եւս անուշադրութեան է մատնած: Առանց չափազանցնելու, կարելի է փաստել, որ բոլոր ջրաղբիւրներում քլորատրման ինքնաշէն հանգոյցները, համապատասխան սարքաւորումներով, հնամաշ են, իրենց դարն ապրած: Դոզաւորումը աւտոմատացուած չէ, ամէն ինչ ընթանում է զուտ տեսողական չափանիշներով, գերակայում է սպասարկող անձնակազմի անհատական գործօնը: Յաճախ «թուացեալ» ապահովութեան համար (պոմպերի պրոֆիլակտիկ կամ չնախատեսուած կանգառներ) օպերատորը (մեքենավար) քլորի դոզան պահում է նորմատիւային, թոյլատրելի նուազագոյն սահմանագծին մօտ: Երբեմն էլ տեխնիկական պատճառներով (հեղուկ քլորի մատակարարման յաճախակի ընդհատում) օրերով դադարում է որեւէ ջրատարի քլորացումը:

Յաւօք, համակարգի մաս կազմող կառոյցների (ջրընդունիչներ, ջրատարներ, ջրամբարներ, փակուղի ցանցեր) նախատեսուած պրոֆիլակտիկ լուացումները եւ ախտահանումները եւս կատարւում են դէպքից դէպք, էլ չենք խօսում այն վթարների մասին (մեծ է կոյուղաջրերի ներթափանցման վտանգը), որոնց վերացումից անմիջապէս յետոյ անպայման ցանցի լուացում ու վարակազերծում է պահանջւում:

Նկատի ունենալով, որ վարակազերծման-ախտահանման, լուացման, հեղուկ քլորի, ինչպէս նաեւ նատրիումի հիպոքլորիդի տեղափոխման, պահպանութեան աշխատանքները յատուկ գիտելիքներ են պահանջում, կարծում եմ, ժամանակն է համակարգում ստեղծելու կենտրոնացուած յատուկ ծառայութիւն, որը, իրականացնելով վերոյիշեալ աշխատանքները, միաժամանակ պատասխան կը տայ դրանց որակի ու հետեւանքների համար:

Տարիներ առաջ Գառնու ձորի սանգոտում հեղուկ քլորի 3 տոննանոց բարձր ճնշումային մետաղական տարան (շահագործման ժամկէտը վաղուց անցած էր) տեղակայման ընթացքում վնասուել էր: Համակարգի, ինչպէս նաեւ «Նաիրիտ» արտադրական միաւորման մասնագէտները անկարող էին որեւէ միջամտութիւն ցուցաբերել: Արտահոսած քլորը ինքն իրեն, օրերի ընթացքում տարրալուծուեց շրջապատում, բարեբախտաբար՝ առանց մարդկային զոհերի: Տարօրինակ կենսակերպ է ձեւաւորուել մեզանում, բոլորը՝ առանձին անհատներ, վերահսկող տեխնիկական տեսչութիւններ, սանիտարաէպիդեմիական եւ հրշէջ ծառայութիւններ, հանդէս են գալիս մեղադրողի դերում:

Տունը վթարային է, գազի արտահոսքի պայթիւնից շէնք է վնասուել, հրդեհը ժամանակին չեն մարել, նորմալ ջեռուցում չեն ապահովում, համաճարակային վտանգ կայ՝ ջրմուղն է մեղաւոր: Մինչդեռ նրանց գործունէութիւնը պէտք է նպատակաուղղուած լինի սպասուող դէպքերի (վթարներ, խախտումներ, հրդեհ, համաճարակ եւ այլն) կանխարգելմանը, տուեալ ոլորտին բնորոշ աշխատանքների կատարողական գործընթացների վերահսկմանը, թելադրուող պարամետրերի խստագոյնս պահպանմանը, այլ ոչ թէ կատարուած փաստերի սոսկ արձանագրմանը:

Մինչդեռ նրանց գործունէութիւնը պէտք է նպատակաուղղուած լինի սպասուող դէպքերի (վթարներ, խախտումներ, հրդեհ, համաճարակ եւ այլն) կանխարգելմանը, տուեալ ոլորտին բնորոշ աշխատանքների կատարողական գործընթացների վերահսկմանը, թելադրուող պարամետրերի խստագոյնս պահպանմանը, այլ ոչ թէ կատարուած փաստերի սոսկ արձանագրմանը:

Իրավիճակը դարձել է օրհասական, առաջացել է նախահամաճարակային վիճակ, մարդկանց տեղափոխում են հիւանդանոցներ, «տարերքի» մէջ մտնելով՝ ուշացած փորձեր են անում՝ բացայայտելու սկզբնաղբիւրը ու վերացնելու յարուցիչ օջախը:

Գրեթէ չկայ դէպք, որ պլանային-ընթացիկ ստուգումների արդիւնքում, կանխազգալով մօտալուտ նախահամաճարակային վտանգը, պատասխանատու եւ օժանդակ ծառայութիւններին «ի զէն» յայտարարելով՝ կտրուկ միջոցների շնորհիւ կանխած լինէին այն: Չէք գտնի սան-ծառայութեան գոնէ մէկ գրասենեակ, որի պատին փակցուած լինեն բնակավայրի (համայնք, քաղաք եւ այլն) ջրամատակարարման համակարգի (ջրընդունիչ, ջրատար, ջրամբար, փակուղային ցանցեր) պլանային լուացումների, ախտահանումների գրաֆիկներ:

Հիմա կը սկսեն ջանադրաբար պատճառաբանել, որ իրենց պարտականութիւնների մէջ նման բան չի մտնում, եւ այլն, եւ այլն:

Երկրաշարժի հազարաւոր անմեղ զոհերին, ինչպէս նաեւ ողջ մնացածներիս ամենեւին չէր (չի) հետաքրքրում, թէ դուք, ինչպէս նաեւ ժամանակին ու հիմա հանրապետութիւնում կառուցուող բնակելի շէնքերի ու օբյեկտների շինարարութիւնը վերահսկող տեսչութիւնները ինչ են գրել իրենց կանոնագրերում:

Մենք ուզում ենք, որ մեր գոյութիւնը երաշխաւորուած լինի, եւ եթէ դրանում դուք անելիք ունէք, ապա կատարէք առանց սակաւարկութեան: 90-ական թուականներին Հին Նորքին ու Մարաշին ջուր մատակարարող «Մարաշի» ջրամբարի փակ սանիտարական գօտում գիշերային խաւարում կրակոցներ էին հնչել, շուրջ երկու օր բնակչութեանը ջուր չտրուեց, որովհետեւ վտանգ կար, որ այն կարող էր թունաւորուած լինել ադրբեջանցիների կողմից: Սանէպիդեմիական ծառայութիւնների կողմից խմելու ջրում թունաքիմիկատ յայտնաբերող, որոշիչ փորձ չարուեց, որովհետեւ պատճառաբանում էին, թէ փորձանիւթ չունեն: Խուսափելով պատասխանատուութիւնից՝ ինքնաբերաբար անվերահսկելի էք դարձնում ջրմուղագործների այս բնագաւառի գործունէութիւնը, ձեր կամքից անկախ «նպաստում» էք նախահամաճարակային վիճակների առաջացմանը:

Պատասխանատուութեան տեսանկիւնից շատ կարեւոր է հրշէջ ծառայութիւնների, ջրմուղագործների ու օբյեկտի (բնակելի շէնքեր) սեփականատիրոջ պարտականութիւնների յստակեցումը: Այդ իմաստով ժամանակի հրամայական է համատեղ ուժերով Երեւան քաղաքի բնակելի շէնքերի, շինութիւնների, գործարանների, օբյեկտների հաշուեգրումը կամ, ինչպէս ասում են, «անձնագրաւորումը»: Եռակողմ հաստատուած սխեմայի վրայ պէտք է նշուեն այն տուեալները (հակահրդեհային հիդրանտներ, ջրատրման ժամեր, ջրի ճնշում, ոչ ջրատրման ժամերին ջրապահովման սխեմա եւ այլն), որոնց առկայութեան պայմաններում հնարաւոր կը լինի մարել հրդեհը:

Իւրաքանչիւր քաղաքացի, սեփականատէր պէտք է իմանայ՝ կորստի դէպքում (նիւթական արժէք թէ մարդկային) ում «օձիքից» բռնի:

Մրցավարի աչքերով

Ճապոնիայի եւ Կորէայի մարզադաշտերում մթնոլորտն ապտիճանաբար աւելի է շիկանում: Աւարտում են աշխարհի առաջնութեան եզրափակիչ փուլի խմբային մրցաշարերը: Հեռուստաէկրանի առջեւ դրամատիկ իրադարձութիւնների ընթացքին հետեւողների թում է նաեւ ԿԱՐԷՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ: ՖԻՖԱ-ի գլխաւոր մրցաւարին խնդրեցինք կիսել դպաւորութիւնները:

Գագիկ ԲԵԳԼԱՐԵԱՆ

Չկայ ֆուտբոլային մի ստուգատես, որում մրցավարական սխալներ չլինեն: Այս առումով աշխարհի առաջնութիւնն էլ բացառութիւն չէ: Չմոռանանք, որ լարուածութիւնից կոպիտ վրիպումներ են թոյլ տալիս նաեւ ֆուտբոլի համաշխարհային աստղերը: Մրցավարը նոյնպէս մարդ է եւ կարող է սխալուել: Սա եւս ֆուտբոլի անբաժան մասն է:

- Եւրոպական, ասիական, աֆրիկեան, ամերիկեան հաւաքականների խաղամակարդակը հաւասար է: Թերեւս, այդ է պատճառը, որ մարզադաշտերում պայքարը լարուած է: Առաջնութիւնն առանձնայատուկ է. նախնական փուլի հանդիպումներում անակնկալները, անսպասելի արդիւնքները շատ են: Տարօրինակ է, որ երեք խաղից յետոյ ճամպրուկները կապել են յաղթողի հիմնական յաւակնորդ համարուող աշխարհի, Եւրոպայի չեմպիոն ֆրանսիացիները եւ արգենտինացիները:

- Ո՞ր խաղերն են Ձեզ առաւել դուր եկել:

- Անգլիայի եւ Արգենտինայի, Շուեդիայի եւ Արգենտինայի, Սենեգալի եւ Ուրուգուայի հաւաքականների մրցամարտերը: Ի դէպ, հանդիպումների 80 տոկոսը դիտարժան է, եւ ֆուտբոլասէրներն անկարող են անտարբեր մնալ, չհետեւել դրանց ընթացքին: Ու եւս մէկ անգամ համոզւում ենք, որ, յիրաւի, ֆուտբոլը գրաւիչ խաղ է եւ աշխարհում լաւագոյնը:

- Եզրափակիչի մասնակից 32 թիմերի թւում ակնյայտ ուժեղներ եւ թոյլեր կա՞ն:

- Բացարձակ թոյլ թիմեր չկան: Գերմանիայի եւ Սաուդեան Արաբիայի հաւաքականների մրցամարտում գրանցւեց արտասովոր՝ 8:0 հաշիւը: Սակայն ինչ-ինչ պատճառներ կային: Յամենայնդէպս, արաբները սայթաքելուց յետոյ ուժ գտան համախմբուելու եւ ճակատամարտէր տալու: Եւ նրանք ապացուցեցին, որ ամենեւին էլ շատ թոյլ չեն: Միւս հանդիպումների արդիւնքներն անկանխատեսելի են: Չկան չեմպիոնի կոչման լիիրաւ յաւակնորդներ, նաեւ բացարձակ յետնապահներ: Դա է վկայում նաեւ այն, որ աշխարհի՝ այժմ արդէն նախկին չեմպիոն Ֆրանսիայի ընտրանին ոչ միայն ոչ մի յաղթանակ չտարաւ, այլեւ երեք խաղում գնդակ չխփեց մրցակիցների դարպասը:

- Այնուամենայնիւ, ո՞ր աշխարհամասի ֆուտբոլիստներն են եղանակ ստեղծողը, նորամուծութիւն կիրառողը:

- Կարծում եմ՝ առաւել գրաւիչ խաղերն առջեւում են: Վերջում պարզ կը դառնայ, թէ այժմ ֆուտբոլում ո՞ր աշխարհամասի ներկայացուցիչների խաղառճն է նախապատուելի:

- Մրցավարութիւնն ինչպիսի՞ն է:

- Չկայ ֆուտբոլային մի ստուգատես, որում մրցավարական սխալներ չլինեն: Այս առումով աշխարհի առաջնութիւնն էլ բացառութիւն չէ: Չմոռանանք, որ լարուածութիւնից կոպիտ վրիպումներ են թոյլ տալիս նաեւ ֆուտբոլի համաշխարհային աստղերը: Մրցավարը նոյնպէս մարդ է եւ կարող է սխալուել: Սա եւս ֆուտբոլի անբաժան մասն է: Բնական է, կան նաեւ տարաբնոյթ խօսակցութիւններ:

- Իտալացիները 1:2 հաշուով զիջեցին խորվաթներին: Ակնյայտօրէն մեղքի բաժին ունէր անգլիացի մրցավար Գրեմ Փոլը, որը չգրանցեց «Սկուադրայ Ազուրայի» խաղացողների՝ մրցակցի դարպասը խփուած երկու գնդակը:

- Տեսագրութիւնը մի քանի անգամ դիտելուց յետոյ համոզւում ենք, որ մրցավարը սխալուել է: Սակայն նա ստիպուած էր ակնթարթային վճիռ կայացնել...

Ճիշտ է, իտալացիները բողոքեցին, սակայն ՖԻՖԱ-ի ներկայացուցիչները մրցաւարի գործողութիւններում դատապարտելի ոչինչ չտեսան:

- Արգենտինա-Շուեդիա հանդիպման մրցավարը կարմիր քարտ ցոյց տուեց պահեստայինների նստարանին տեղ զբաղեցրած երկու ֆուտբոլիստի: Ո՞ր դէպքերում է նման պատիժ կիրառւում:

- Ցանկացած: Անկախ նրանից՝ ֆուտբոլիստը խաղադաշտում է թէ պահեստայինների նստարանին, պարտաւոր է կարգուկանոն պահպանել: Եթէ սահմանուած օրէնքը խախտւում է, մարզիկը պատժւում է ընդհանուր սահմանուած կարգով:

- Ո՞ր թիմերի համար էք աւելի շատ ցաւում:

- Եթէ Ռուսաստանի հաւաքականը հանդէս է գալիս, ես ցաւում եմ այդ թիմի համար: Իսկ ընդհանրապէս, ինձ հոգեհարազատ է Բրազիլիայի հաւաքականի խաղը:

- Բացառութեամբ աշխարհի առաջնութեան մասնակիցներին հիւրընկալած երկու երկրից՝ միւս գրեթէ բոլոր պետութիւններում ֆուտբոլը սառեցուած է: Այս առումով Հայաստանը բացառութիւն է: Ազգային առաջնութիւնը լիահուն շարունակւում է: Ճի՞շտ է սա:

- Ինչ խօսք, նպատակայարմար կը լինէր, որ մեր երկրում եւս դադար տրուէր: Թերեւս, պատճառն այն է, որ ազգային առաջնութիւնը փոքր-ինչ ուշ է սկսուել:

- Ի՞նչ էք կարծում՝ հայաստանցի մրցավարները ե՞րբ կը վարեն Եւրոպայի, աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարերի հանդիպումներ: Գուցէ կարեւոր նախապայման կը կարողանայ լինել այն, եթէ մեր թիմը դրանց մասնակցելու իրաւունք ստանայ:

- Ընտրութիւնը մի շարք գործօններով է պայմանաւորուած: Օրինակ, Եւրոպայից նման իրաւունքի են արժանացել ֆուտբոլային համբաւ ունեցող պետութիւնների ներկայացուցիչները: Աշխարհի առաջնութիւնում եթէ ռուսաստանցի մրցավար չկայ, ապա ԱՊՀ երկրների ներկայացուցիչների մասին խօսք լինել չի կարող: Հայաստանում եթէ ֆուտբոլը զարգանայ, մեր մասնագէտներին էլ նման հնարաւորութիւն կտրուի: Սակայն առաջիկայ տարիներին դա բացառւում է:

- Բայց, աշխարհի առաջնութիւնում ցածր մակարդակ ունեն ասիական, աֆրիկեան երկրների մրցավարները:

- Այնուամենայնիւ, պատահական մրցավարներ չկան: Թերեւս, մեզ համար է անսովոր, թէ նրանք ինչպէս են սպասարկում հանդիպումները: Եթէ մակարդակի տարբերութիւն էլ կայ, ապա՝ աննշան:

- Ֆուտբոլիստները խստօրէն պատժւում են, երբ խաղադաշտում հայհոյում են: Ժամանակին մրցավարների համար յատուկ մի գրքոյկ էր հրատարակուել, որում տարբեր լեզուներով հայհոյանքներ են: Ինչպէ՞ս են մրցավարները գլխի ընկնում, որ ֆուտբոլիստը խախտել է կարգը:

- Անկեղծ ասած, այդ գրքոյկից տեղեակ չեմ: Թերեւս, դժուար չէ գուշակել վատ ասուած խօսքը՝ անգամ եթէ տուեալ լեզուն չես հասկանում:

- Երբեմն մարզաշապիկը հանելու համար մրցավարները պատժում են ֆուտբոլիստին, երբեմն էլ՝ ոչ: Ինչո՞վ է սա բացատրւում:

- Շուրջ մէկ տարի է, որ յատուկ կարգ է սահմանուած: Մարզաշապիկը կարելի է հանել: Սահմանափակումն այն է, որ երկրորդ մարզազգեստի վրայ գովազդ չպէտք է լինի եւ այլն: Օրինակ, սենեգալցիներից մէկն ուրախութիւնից հանեց մարզաշապիկը, իսկ խաղընկերները մի ողջ ներկայացում ցուցադրեցին: Գեղեցիկ էր եւ ամենեւին էլ ոչ պարսաւելի:

Անհրաժեշտ է «վիրաբուժական» միջամտութիւն

Օրէցօր հայկական սպորտը գահավիժում է անդունդ: Պատճառները շատ են եւ տարաբնոյթ: Ակնյայտ է, որ ստեղծուած իրավիճակում մեղքի մեծ բաժին ունեն մանկապատանեկան մարզադպրոցները:

Աղկածորի օլիմպիական բազայում կայացած համաժողովին, Հայաստանի մարզօջախների տնօրէններից բացի, մասնակցեցին նաեւ քաղաքապետեր եւ համայնքապետեր, թաղապետեր եւ տեղական ինքնակառավարման մարմինների այլ պաշտօնեաներ: Խնդիրը մէկն էր՝ ուղիներ գտնել ստեղծուած իրավիճակից դուրս գալու համար:

ՀԱՕԿ-ի նախագահ, ՀՀ մշակոյթի, երիտասարդութեան հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարեանը չթաքցրեց, որ տագնապալի դրութեան մասին տեղեկացրել է ՀՀ նախագահին, վարչապետին, եւ համաժողովի մասնակիցներին կոչ արեց ակտիւ մասնակցել քննարկմանը: Նա ընդգծեց, որ յապաղելը վտանգաւոր է, եւ համակարգն առողջացնելու համար ուղղակի պէտք է դիմել «վիրաբուժական» միջամտութեան:

Հիմնական զեկուցողը սպորտվարչութեան պետ Արմէն Գրիգորեանը, ներկայացրեց, թէ ինչպիսին է 1990-ական թուականների եւ ներկայիս օրերի համեմատական բնութագիրը: Պարզուեց, որ գրեթէ բոլոր վայրերում 2/3-ով կրճատուել է մարզադպրոցներում աշխատող մարզիչների եւ նրանց սաների թիւը: Տարօրինակ է, բայց փաստ, որ Հայաստանում արմատաւորուած աւանդական մի շարք մարզածեւերին փոխարինել են արեւելեան մարտարուեստի ձեւերը: Խօսուեց նաեւ այն մասին, որ վերջիններս դասաւանդում են մասնագիտական կասկածելի որակաւորում ունեցող անձինք:

Բայց ամենացաւալին այն համարուեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների մեծ մասը մարզադպրոցներին միջոցներ չի յատկացնում: Կան նաեւ մարզօջախներ, որոնցում 1,5-2 տարի աշխատավարձ չի վճարուել: «Հայաստան» մարզական միութեան նախագահ, ՀԱՕԿ-ի փոխնախագահ Ռազմիկ Ստեփանեանն անդրադարձաւ կադրային «քաղաքականութեանը»: Ըստ վիճակագրութեան, մարզադպրոցներում աշխատողների միայն 70 տոկոսն ունի բարձրագոյն կրթութիւն: Պարզուեց, որ վերջին անգամ մասնագէտների ատեստացիա է անցկացուել 1989 թուականին: Շուրջ 10 տարի է, որ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը չի կազմակերպում որակաւորման դասընթացներ:

Պրն Ստեփանեանը տարօրինակ համարեց այն, որ տարբեր վայրերում աշխատողների աշխատավարձի չափը զգալի տատանւում է:

Ելոյթներ ունեցան, առաջարկներ կատարեցին նաեւ «Սեւան» ընկերութեան նախագահ Ռոբերտ Տիգրանեանը, ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պրոռեկտոր Միքայէլ Իսպիրեանը եւ ուրիշներ:

Իսկ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքների գործունէութիւնը համակարգող նախարարի տեղակալ Կամօ Արէյեանն այն կարծիքին էր, որ հիմնահարցերը հնարաւոր է լուծել միայն մարզական կազմակերպութիւնների եւ տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ ուժերով:

Վերջում համաժողովի մասնակիցները որոշեցին դիմել կառավարութեանը, որպէսզի միջոցներ յատկացուեն կարճ ժամանակամիջոցում մարզադպրոցների ներկայացուցիչների աշխատավարձի պարտքերը փակելու համար: Վճռուեց նաեւ նոր համաժողով անցկացնել դեկտեմբերի առաջին կէսին:

Համաժողովում հարեւանցի խօսուեց այն մասին, որ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի շրջանաւարտների չնչին մասն է աշխատանքի գործուղւում մարզական եւ հանրակրթական դպրոցներ՝ թէեւ նրանց կարիքն այդ հաստատութիւններում շատ է զգացւում: Ընդհանրապէս չշօշափուեց, որ մի շարք մարզադպրոցներում մարզիչները ապօրինաբար փող են պահանջում աշակերտներից: Շրջանցուեց նաեւ այն թեման, որ մարզադպրոցների մեծ մասում, շարունակելով խորհրդային տարիների «աւանդոյթը», «մեռած հոգիներ» են պահում կամ՝ «օրինական» ձեւակերպումներ կատարելով՝ աշխատավարձ տալիս այլ անձանց:

Գուցէ նաեւ կարելի էր խոստովանել, որ տարիներ առաջ պետական մարզական կառոյցը, կրթութեան համակարգից «խլելով» մարզադպրոցները, այդպէս էլ ի վիճակի չեղաւ տէր կանգնելու հաստատութիւններին: Եւ համակարգն այժմ ամբողջովին կաթուածահար է, քանի որ մեծ անջրպետ է գոյացել հանրակրթական դպրոցների ու մարզօջախների միջեւ:



ՀՈՐՈՍԿՈՊ

Խոյ - Շաբաթուայ սկզբին անսպասելիօրէն ի յայտ կը գան պրոբլեմներ կապուած տան հետ: Սակայն ամբողջ ընտանիքով կարող էք յաղթահարել դրանք: Շաբաթուայ վերջին օրերը կ'անցկացնէք ընկերների շրջապատում: Հնարաւոր է չնախատեսուած ճամփորդութիւն:

Ցուլ - Ոմանք մտածում են «սեւ» օրուայ մասին ու դողում են ոսկու վրայ, սակայն հիմա չեն կարող խուսափել ծախսերից. հարկաւոր է թարմութիւն մտցնել տան մէջ: Նոր սառնարանի, սալօջախի եւ այլ տեխնիկայի գնումը կատարէք շաբաթուայ վերջին:

Երկուրեակներ - Ճակատագրական փոփոխութիւններ անձնական կեանքում եւ մասնագիտութեան մէջ սպասւում են նրանց, ում ծննդեան օրը եւ արեւի խաւարման ժամանակը համընկնում են: Ձեզանից է կախուած այդ փոփոխութիւնները դրակա՞ն կը լինեն, թէ՞ բացասական: Հնարաւորութեան դէպքում մեկնէք առողջարան կամ հանգստեան տուն:

Խեցգետին - Ուժերի անկում կ'ունենաք, եւ ձեզ կը պաշարի միայնութեան զգացումը: Մշտական հիւանդութիւնների սրացումը կանխէք պրոֆիլակտիկ միջոցառումներով: Շաբաթուայ սկզբին աշխատէք աւելորդ ծախսեր չանել, հակառակ դէպքում ձեր տնտեսած գումարը յօդս կը ցնդի:

Առիւծ - Շաբաթուայ սկզբին ի յայտ կը գան ֆինանսական նոր հնարաւորութիւններ: Վեներայի ազդեցութեամբ այս աստղակերպի կանայք կը դառնան էլ աւելի հմայիչ, իսկ տղամարդիկ, յանուն գեղեցիկ տիկնանց, պատրաստ կը լինեն ցանկացած սխրանք գործելու: Մի խօսքով՝ ռոմանտիկ ժամանակներ են սպասւում ձեզ:

Կոյս - Կը զգաք, որ վերջին երկու տարուայ ջանքերը իզուր չեն անցել, եւ մոլորակները հիմա հիմնաւորում են ձեզ: Յաջողութիւններ են սպասւում մասնագիտական ճակատում. ծառայողական աստիճաններով վեր կելնէք կամ պարգեւավճար կը ստանաք: Աշխատէք, սակայն, պահպանել հաշուեկշիռը աշխատանքի եւ ընտանիքի միջեւ, որպէսզի հարազատներին չթողնէք դատարկ սառնարանի ու լքուած տան հետ միայնակ:

Կշեռք - Հարկ կը լինի վերանայել երկարաժամկէտ նախագծերին վերաբերող ծրագրերը: Հաւանաբար ճիշտ չէք գնահատել ձեր ցանկութիւններն ու հնարաւորութիւնները: Կարող էք հիանալիօրէն հանգստանալ նաեւ ամառանոցում, իսկ ամուսնական կապերի ամրագրումը յետաձգէք, քանզի հիմա աւելի շատ ցանկանում էք հանգստեան օրերն անցկացնել ընկերների հետ:

Կարիճ - Անցած երեք շաբաթը լաւ աշխատեցիք, իսկ հիմա եկել է դրամական փոխհատուցման ժամանակը: Շաբաթուայ առաջին օրերը նպաստաւոր են ընտանեկան ամենատարբեր ֆինանսական հարցեր լուծելու համար: Բիզնեսով զբաղուողներին կը յաջողուի շահաւէտ պայմանագիր քննարկել գործընկերների հետ:

Աղեղնաւոր - Պատրաստ էք հրաժարուել կենսակերպի հնացած փոխյարաբերութիւններից եւ լինել ազատ ու անկաշկանդ: Տեղում չգտնելով սեփական հնարաւորութիւնների կիրառումը մտածում էք ուրիշ շրջան, քաղաք, նոյնիսկ երկիր մեկնելու մասին: Արմատական փոփոխութեան հեռանկարը հակասութիւններ կը ծնի հին գործընկերների եւ կողակցի հետ յարաբերութիւններում:

Այծեղջիւր - Ընտանիքում կարող է տեղի ունենալ մի իրադարձութիւն, որը հիմնովին կ'ազդի ձեր գերդաստանի վրայ (դա կարող է լինել բնակարանի փոխանակումը կամ սիրելի զոքանչի այցելութիւնը): Հողամաս կամ անշաժ գոյք գնել ցանկացողներն այս շաբաթ կարող են իրականացնել իրենց երազանքը: Այդ հարցում ձեզ կ'աջակցեն ազգականները:

Ջրհոս - Օրակարգում բնակարանի հարցն է: Սակայն դրա լուծումը կը ծնի նոր պրոբլեմներ. կենսակերպի վերակառուցում, այդ թւում աշխատանքի, անգամ մասնագիտութեան փոփոխութիւն: Փորձութիւն է սպասւում ամուսնական յարաբերութիւնների ամրութեանը: Եթէ սէրը բոլորովին չի մարել, ամէն ինչ կ'անցնի առանց փոխադարձ կշտամբանքների:

Ձկներ - Ոմանց կը յաջողուի դրսեւորել առաջներում պէտք չեկած տաղանդները: Ամէն ինչ ուրախութիւն կը բերի ձեզ. ընտանիքը, երեխաները, աշխատանքը եւ, հիանալի՛, սիրելի հորին: Շաբաթուայ կէսին սպասւում է դրամապանակի գիրացում: Կարող էք բաւարարել ոչ միայն կենսական պահանջները, այլ նաեւ ձեզ ուրախացնել թանկարժէք նուէրով:

Khabbaz-Orient Plus
Travel & Tourism
Varna
Starting from 350$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included
Cyprus 3 days 185 $
Boat trip to Cyprus & Greece 380 $
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

ԵՐԿԻՐ
գովազդ
52 15 01
54 41 97
Ձեր գովազդը դրվում է նաև Լիբանանում

ԵՐԿԻՐ
ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի պաշտոնաթերթ
Խմբագրական խորհուրդ
Տնօրեն Արայիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Երեւան 10, Հանրապետության 30
հեռ. 52 15 01
Ծավալը 4,5 տպ. մամուլ
Տպաքանակը 2 500
Տպագրությունը «Տիգրան Մեծ» ՓԲԸ

YERKIR Weekly
Editorial Board
30 Hanrapetutian Str., Yerevan 10
tel. 52 15 01
e-mail: erkir@arminco.com
Ոճավորումը Սամվել Փարթամյանի
© Երկիր

Kodak
FILM

Գնի՛ր
Kodak

Ֆոտոխցիկ
սառցի՝ ամեն